Հայ և գերմանացի աշխարհագրագետները ուսումնասիրում են Հայաստանի լանդշաֆտները:

[28.09.16] **ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԸ ԿՕԳՆԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԿԱՌՈՒՑԵԼ ԿԱՐԻԵՐԱ**
Այսօր ԵՊՀ-ում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում-խորհրդատվություն ուսանողների համար:

[29.09.16] **«ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՈՒՆԴՆԵՐ ԿՐԹԵԼՆ Է...»**
Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստի ընթացքում գործընկերները նշեցին ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յուրի Վարդանյանի 80-ամյա հոբելյանը:

[29.09.16] **ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ 60%-Ը ԼԻԱՐԺԵՔ ԱՎԱՐՏԵԼ Է ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ**
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս ուստարվա առաջին նիստը՝ օրակարգային 7 հարցերով:

[30.09.16] **ՓՈՐՁԱԳԵՏԸ ԽՈՍԵՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Հանրային դիվանագիտություն և փափուկ ուժ» խորագրով սեմինար-դասընթացը:

[30.09.16] **ԳԵՐՄԱՆԱՑԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ ԿՐԿԻՆ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ Է**
Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում դասախոսությամբ հանդես եկավ Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Լյուդվիգ Պոլը:

[03.10.16] **ՀԱՅ-ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**
Հոկտեմբերի 3-ին ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Թուրքմենստան. բարգավաճման և հետնողական զարգացման 25 տարի» խորագրով միջազգային գիտաժողովը:

[03.10.16] **ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ 30-ԱՄՅԱԿԻՆ**
Սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Ծաղկաձորում տեղի է ունեցել «Անվտանգության հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում» խորագրով միջազգային գիտաժողովը:

[03.10.16] **ԵՊՀ-Ն ԵՎ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ԵՆ**
Այսօր ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում Մայր բուհի և Ուրուգվայի համալսարանի միջև համագործակցության պայմանագիր կնքվեց:

[03.10.16] **ՆՇՎԵՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ**
Արդեն երեք տարի է, ինչ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնը մեծ շուքով նշում է Սոցիալական մանկավարժի միջազգային օրը:

[04.10.16] **ՄԱԿԱԲՈՒԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՔԻՑ**
Առաջիկա երեք օրերին ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում հայ և արտասահմանցի մասնագետները քննարկելու են մակաբուծաբանության վերաբերյալ խնդիրներ:

[04.10.16] **ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐԻ ՓՈՐՁԸ**
Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի պատվիրակությունը քառօրյա այցով մեկնել էր Նիդեռլանդներ՝ կոռուպցիայի դեմ պայքարի և ակադեմիական բարեվարքության խթանման փորձը ուսումնասիրելու նպատակով:

[04.10.16] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՂԹՈՂ ԵՆ ՃԱՆԱՉՎԵԼ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ**
Հոկտեմբերի 1-ին Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում «Կասպերսկի լաբորատորիա» ընկերությունն ամփոփել է «Kaspersky Student's Challenge» ուսանողական ծրագրավորման մրցույթի արդյունքները:

[05.10.16] **ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
Այսօր ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում էին հյուրընկալվել Գերմանիայից ժամանած մի խումբ գիտնականներ, կրթության ոլորտի ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ և ուրիշներ:

[06.10.16] **ԱՊԱԳԱ ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ**
Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնում անցկացվել է «Կենդանին մեր կյանքում» խորագրով միջոցառումը:

[06.10.16] **ԵՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԿԻՆՈԱՇՈՒՆ-2016»-Ը**
ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբը «Կինոաշուն» փառատոնի շրջանակում շուրջ մեկ ամիս համալսարանականներին կներկայացնի հայկական կինոարտադրության տարբեր ֆիլմեր:

[07.10.16] **ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԿԴԱՌՆԱՐ 70 ՏԱՐԵԿԱՆ**
ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում այսօր նշեցին մաթեմատիկոս, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Դանիելյանի 70-ամյակը:

[10.10.16] **ԿՈՐՊՈՒՍԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԵՐԹԸ ՀԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆՆ Է**
ԵՊՀ դասախոսները ռոմանագիտության վերջին ձեռքբերումներին ծանոթանում են Հայդելբերգի համալսարանի պրոֆեսորի օգնությամբ:

[10.10.16] **ԱՊԱԳԱ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ ԵՐԴՎԵԼ ԵՆ**
Հոկտեմբերի 8-ին Օշականում տեղի է ունեցել արդեն ավանդական դարձած ապագա թարգմանիչների երդման հանդիսավոր արարողությունը:

[11.10.16] **ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՅՑԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ**
ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության նախաձեռնությամբ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք ներկայացուցիչներ այցելել են մարզային դպրոցներ և հանդես եկել դասախոսություններով:

[11.10.16] **ԲՈՒՀԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ**
Եվրասիական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ասոցիացիայի 29-րդ համագումարն այս տարի հյուրընկալել է ԵՊՀ-ն:

[11.10.16] **ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՐԹԵԼ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Արդյունավետ հարցազրույցի և CV գրելու հմտություններ» խորագրով սեմինար-դասընթաց:

[12.10.16] **ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**
Հայկական իրականության մեջ նորություն համարվող բյուջետային գրասենյակին վերաբերող հանդիպում-քննարկումն իր հարկի տակ էր հյուրընկալել ԵՊՀ-ն:

[12.10.16] **ԵՊՀ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԸ 95 ՏԱՐԵԿԱՆ Է**
Այսօր Մայր բուհում տեղի ունեցավ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումը:

[12.10.16] **ԱՊԱԳԱ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍԻ ՀԵՏ**
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) հետ:

[12.10.16] **ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆ Է**
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնի 1-ին կուրսի ուսանող Սարգիս Նիազյանը հաղթող է ճանաչվել շախմատի ներբուհական առաջնությունում:

[12.10.16] **ԱՅՍ ՕՐԸ ՄԻԱՎՈՐՈՒՄ Է ԻՍՊԱՆԱԽՈՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ**
Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում մեծ շուքով նշեցին Իսպաներենի միջազգային օրը:

[13.10.16] **ԴԻՏԱՐԿՎԵՑԻՆ ՌԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց «Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը» խորագրով երկօրյա գիտաժողովը:

[13.10.16] **ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՀԱՅ-ՇՎԵԴԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**
Շվեդական կրթական համակարգը ներկայացնող պատվիրակությունը Հայաստանում է՝ տեղացի գործընկերներին ճանաչելու և կապեր հաստատելու նպատակով:

[14.10.16] **ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱՑԱՌԱՊԵՍ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ**
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում հոկտեմբերի 13-ին անցկացված դասընթացով մեկնարկեց «Իրավագիտությունն անգլերենով» ուսումնասիրման ծրագիրը:

[14.10.16] **ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ**
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների դեկան Գեղամ Պետրոսյանի հյուրն էր Նիժնի Նովգորոդի պետհամալսարանի պրոֆեսոր Ալեքսանդր Կոռնիլովը:

[14.10.16] **ԱՊԱԳԱՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՏԵՂԾՈՂՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԱՅՍՕՐ**
Տեխնոլոգիական ոլորտի համաշխարհային առաջատար ընկերությունները հավաքվել են Հայաստանում՝ ներկայացնելու ու ծանոթանալու միմյանց վերջին նվաճումներին:

[14.10.16] **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան բարձրագույն ռազմական համալսարանը կհամագործակցի ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հետ:

[14.10.16] **Ո՞ՐՆ Է ՍՏԱՐՏԱՓԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ սեմինար-դասընթաց, որի ընթացքում ներկայացվեցին հաջողակ ստարտափի հիմնական բաղադրիչները:

[17.10.16] **ՄԵԿ ՇԱԲԱԹ՝ ՄԻԱՅՆ ԻՏԱԼԵՐԵՆՈՎ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ Իտալերենի շաբաթվա հանդիսավոր բացումը:

[18.10.16] **ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ**
Այսօր ԵՊՀ-ում արտերկրից ժամանած պրոֆեսորները դասախոսություն կարդացին ուսանողների համար:

[18.10.16] **ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԴԱՍԱԽՈՍՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՎԱՍՏԱԿԱԾ ՀԱՆԳՍՏԻ**
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լարիսա Մնացականյանի մեծարման ցերեկույթը:

[19.10.16] **ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ էին այցելել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ներկայացուցիչները:

[20.10.16] **ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ ՄԵԿՈՎ ԱՎԵԼԱՑԱՎ**
ԵՊՀ 77-րդ պատվավոր դոկտորի կոչմանն արժանացավ Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն Վիկտոր Մատվեևը:

[20.10.16] **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**
Ոլորտի փորձագետները ներկայացրին գենդերային անհավասարությանը վերաբերող միջազգային ու հայաստանյան փորձը:

[20.10.16] **ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ**
Այսօր ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում անցկացվեց «Շրջակա միջավայրին վերաբերող նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի քննարկման գործընթացին հանրային մասնակցության կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի քննարկում:

[21.10.16] **ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է 68-ՐԴ ԳՐՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌԻՆ**
Հոկտեմբերի 19-ից Գերմանիայի Դաշնության Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում մեկնարկել է միջազգային հրատարակչական ոլորտի ամենամեծ՝ Ֆրանկֆուրտի 68-րդ գրքի տոնավաճառը: Այն կշարունակի գործել մինչև հոկտեմբերի 23-ը:

[21.10.16] **ԱՐՑԱԽՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԴՈՒՇՄԱՆ ՎԱՐԴԱՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ**
Շուշիի Խ. Աբովյանի անվան միջին դպրոցում բացվեց ԵՊՀ ուսանող-ազատամարտիկ Վարդան Ստեփանյանի (Դուշման Վարդանի) անվան դասարանը, իսկ դպրոցի դահլիճում տեղի ունեցավ նրա 50-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթ:

[24.10.16] **ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ**
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը մասնակցեց միջազգային կոնֆերանսի շրջանակներում հրավիրված «Երիտասարդության հետ աշխատանքի որակը. մարտահրավերներ և զարգացման ուղիներ» համացանցային բանավիճային հարթակի աշխատանքներին:

[25.10.16] **ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՆ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ԽԹԱՆ**
ԵՊՀ-ն ընդլայնում է համագործակցությունը ֆրանկոֆոն գործընկերների հետ:

[25.10.16] **ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՐԹԸ ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐԻՆՆ Է**
ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության դրամաշնորհների բաժինն անցկացրեց միջազգայնացման վերապատրաստման հերթական փուլը:

[25.10.16] **ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆԻ ՄՏԵՐԻՄՆԵՐԸ. ՀԱԿՈԲ ԶՈՐՅԱՆ**
Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետի մեծ դահլիճում տեղի ունեցավ «Սողոմոն Թեհլերյանի աջակից ու մարտընկեր՝ Հակոբ Զորյան» խորագրով ցերեկույթը:

[25.10.16] **ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՆ Է**
Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ «Արդի հայ մամուլը ժամանակի զուգահեռներում» խորագրով միջազգային գիտաժողովը:

[25.10.16] **SS ՈԼՈՐՏՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ ՆԱԵՎ ՄԱՅՐ ԲՈՒՀԻՑ ԵՆ**
Հոկտեմբերի 19-ին Սերժ Սարգսյանն ընդունել է SS ոլորտում ՀՀ նախագահի՝ 2016 թ. կրթական պարգևներին արժանացած ուսանողներին և աշակերտներին:

[26.10.16] **ՓԻԹԵՐ ՍԱԹԸՆ. «ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼԻՍ ԵՄ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ»**
Թարգմանչական գործի առանձնահատկությունները հայ ուսանողներին ներկայացնում է անգլիացի թարգմանիչը:

[26.10.16] **ԲԱՑՎԵՑ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ**
Այսօր Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում տեղի ունեցավ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր Գրիգոր Ղարիբյանի անհատական ցուցահանդեսը:

[01.11.16] **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԱՊԱԳԱ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐՆ ԵՆ**
Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում մեկնարկեց «Լեզվի, գրականության և միջմշակութային հաղորդակցության արդի հիմնահարցերը» խորագրով ուսանողական միջբուհական գիտաժողովը:

[01.11.16] **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԷԻՆ**
Հոկտեմբերի 29-31-ը Դիլիջանում անցկացվեց «Փախստականների իրավունք» խորագրով 6-րդ դպրոցը, որը կազմակերպել էին ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը և «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ն:

[02.11.16] **ԱՊԱԳԱ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԵՆ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25 ՏԱՐԻՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետում տեղի ունեցավ «ՀՀ անկախությունը գիտական մեկնաբանություններում» խորագրով գիտաժողով, որը նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին:

[02.11.16] **ԲԱԼԱՆՍԱՎՈՐՎԱԾ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ**
Այսօր ԵՊՀ-ում գյուղական տարածքների զարգացման վերաբերյալ դասախոսությամբ հանդես եկավ Մյունխենի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Հոլգեր Մագելը:

[04.11.16] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ՄԻԵԴ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**
Ապագա փաստաբաններն արդեն այսօր սովորում են Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմում ներկայացնելու կարգն ու այն կազմելու հմտությունները:

[04.11.16] **ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՏՈՆԴ, ՍՈՑԻԱԼԱԿԱ՛Ն ԱՇԽԱՏՈՂ**
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում այսօր նշեցին Սոցիալական աշխատողի մասնագիտական օրը:

[04.11.16] **ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**
«Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերությունը ուսանողների համար ընձեռում է աշխատանքային փորձ, գիտելիքներ և ուսումնական գործընթացին զուգահեռ եկամուտ ստանալու հնարավորություն:

[08.11.16] **ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ 25-ԱՄՅԱԿԸ ՆՇՎՈՒՄ Է ՆԱԵՎ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ**
ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում այսօր տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Թուրքմենստանի անկախության 25-ամյակին:

[10.11.16] **ԵՊՀ-Ի ԵՎ ՀԱՊՀ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է**
Նոյեմբերի 9-ին Երևանի պետական և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանների միջև կնքվեց համագործակցության համաձայնագիր:

[10.11.16] **ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ**
Այսօր ԵՊՀ-ում կայացավ գերժամանակակից տեխնիկայով հագեցած և «IBM» տեխնոլոգիական լուծումներով համալրված «ISTC» ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի բացման արարողությունը:

[10.11.16] **ԵՊՀ-ՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼՈՒ Է ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**
Այսօր անցկացվեց ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 8 և ընթացիկ հարցերով:

[10.11.16] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԸ**
Այսօր ԵՊՀ-ում անցկացվեց «Նորաձևության մարքեթինգ» խորագրով սեմինար-դասընթաց:

[11.11.16] **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**
Երևանում նոյեմբերի 7-9-ը կայացավ Առողջապահական իրավունքի՝ «Առողջապահությունը և մարդու իրավունքները» խորագրով միջազգային առաջին համաժողովը:

[11.11.16] **ԱՊԱԳԱ ՍՈՑԻՈԼՈԳՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ ԻՐԵՆՑ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ամենամյա 5-րդ ուսանողական գիտաժողովը: Այն նախաձեռնել էր ֆակուլտետի ՈՒԳԸ-ն:

[14.11.16] **ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԵՊՀ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻՆ**
Նոյեմբերի 11-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ Ֆրիտյոֆ Նանսենի ծննդյան 155-ամյակին նվիրված միջոցառում, որին ներկա էր նաև ԵՊՀ ռեկտորը:

[15.11.16] **ԱՊԱԳԱ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՊ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ**
Այսօր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) աշխատակազմի աշխատակիցները:

[16.11.16] **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԾԱՎԱԼՎԻ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**
Այսօր ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում կազմակերպվել էր աշխատանքային խորհրդակցություն. նպատակն էր քննարկել ԵՊՀ-ի և Բոնոյի տեխնոլոգիական համալսարանի միջև կնքված համագործակցության իրականացման ուղիները:

[16.11.16] **ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ**
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում Սերուժ Ուրիշյանի հետ, ով ուսանողներին ներկայացրեց իր հիմնադրած Nayiri.com կայքը:

[16.11.16] **ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ ՅՈՒՐԱՅՆՈՒՄ ԵՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց «Նախագծերի կառավարում» խորագրով եռօրյա սեմինար-դասընթացը:

[17.11.16] **«ԱՐԻՍՏՈՏԵԼՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»**
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց «Արիստոտելի ժառանգությունը հայոց մշակույթի համատեքստում (Արիստոտելյան ընթերցումներ)» խորագրով եռօրյա գիտաժողովը:

[17.11.16] **ԵՊՀ-Ն ՆՇՈՒՄ Է ՌԻՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ**
Մեկ օրով ԵՊՀ ռեկտորի, պրոռեկտորի ու դեկանների պարտականությունները կատարելու են ուսանողները:

[17.11.16] **ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ՀԱՅԿՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳՆ Է**
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հայկյան իրավակարգ-2050» խորագրով դերախաղը:

[17.11.16] **ՀԱՅՏՆԻ ԵՆ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «Լավագույն ուսանող-2016» ամենամյա մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը:

[18.11.16] **ԽԱՂԱՆԻ. ԻՐԱՆՑԻ՞, ԹԵ՞ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԳՐՈՂ**
«Խաղանին և պարսկալեզու Շիրվանը» խորագրով գիտաժողովն այսօր ԵՊՀ-ում էր հավաքել ոչ միայն հայ, այլև Իրանից, Իրաքից ու Ռուսաստանից ժամանած մասնագետներին:

[18.11.16] **«ՆԱՏՕ-Ի ՇԱԲԱԹ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔՆ ԱՄՓՈՓԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումների շրջանակում համալսարանականների հյուրն էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի փոխօգնական Ջեյմի Շինը:

[21.11.16] **ԱՊԱԳԱ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆԸ**
Նոյեմբերի 18-ին ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում տեղի ունեցավ «Մարդկային ռեսուրսների կառավարման հոգեբանություն» թեմայով գիտագործնական սեմինար:

[21.11.16] **ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ**
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական աշնանային գիտական նստաշրջանի բացումը, որը կշարունակվի մինչև նոյեմբերի 23-ը:

[23.11.16] **ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ՎԱՐԴԱՆԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ՝ 20-ՐԴ ՀԱՄԱՐԸ**
Նոյեմբերի 22-ին ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի՝ Լեոնիդ Ազգալդյանի անվան լսարանում տեղի ունեցավ ԵՊՀ «Վարդանանք» պարբերաթերթի՝ հերոսի ծննդյան 74-ամյակին նվիրված համարի շնորհանդեսը:

[23.11.16] **ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ**
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ «ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը» թեմայով սեմինար-քննարկում:

[28.11.16] **ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ**
Այսօր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկավ նորվեգացի պրոֆեսոր Նիլս Կորե Բիրկելանդը:

[28.11.16] **ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ԵՎՐՈՊԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ**
Միջազգային և ներպետական իրավունքում փախստականների պաշտպանության և ապաստանի հարցերի կարգավորումն այսօր քննարկվում էր ԵՊՀ-ում:

[28.11.16] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ՝ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳԻ ՄԱՄՆԱԿԻՑ**
Նոյեմբերի 26-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում երգահանի 95-ամյակին նվիրված համերգը համախմբել էր Բաբաջանյանի արվեստի երկրպագուներին:

[29.11.16] **ԵՊՀ «ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԱԿՈՒՄԲԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է**
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում հանդիսավորությամբ նշվեց «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի հիմնադրման 20-ամյակը:

[29.11.16] **ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՆԴԵՔՍԸ՝ ԸՍՏ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ**
Ըստ ժողովրդավարության մակարդակի ինդեքսի՝ Հայաստանը հետխորհրդային երկրների շարքում 3-րդն է՝ Վրաստանից և Մոլդովայից հետո:

[29.11.16] **ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՀԱՐԹԱԿ՝ ՄԵԴԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**
Հանրային հեռուստա- և ռադիոընկերությունների հոբելյանները ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը շնորհավորեց գիտաժողովի ձևաչափով:

[29.11.16] **ՆԱՆՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՆԻ**
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, պրոռեկտորները, Ֆիզիկայի, Ռադիոֆիզիկայի և Արևելագիտության ֆակուլտետների ներկայացուցիչները հյուրընկալել էին Իրանի Իսլամական Հանրապետությունից ժամանած պատվիրակությանը:

[29.11.16] **ՀԵՐՈՍՆԵՐԸ ՄԵԶ ՀԵՏ ԵՆ, ՄԵՐ ԿՈՂՔԻՆ**
Այսօր ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ «Պատերազմից հետո» խորագրով միջոցառում, որը նվիրված էր ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսներին:

[30.11.16] **ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆՔ ՉԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ**
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի չինարեն լեզվի և մշակույթի կենտրոնը կազմակերպել էր Չինաստանի և նրա մշակույթի վերաբերյալ միջոցառում:

[01.12.16] **ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՄՆԵԼ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ**
Նոյեմբերի 30-ին ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ «Զարթուցիչ ինտենսիվ» խորագրով սեմինար-դասընթաց:

[01.12.16] **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**
Սոցիալական մանկավարժություն ուսումնասիրող ԵՊՀ ուսանողներն այսօր այցելել էին «Իմ ուղին» ուսումնավերականգնողական կենտրոն՝ դրա աշխատանքին ու սաների հետ ծանոթանալու:

[01.12.16] **ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԾՐԱԳԻՐԸ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հաջողության նախագիծ» խորագրով սեմինար-դասընթաց: Այն վարում էր «Չոր մարքեթինգ» նախաձեռնության հեղինակ Վահրամ Միրաքյանը:

[01.12.16] **ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՔԻՑ**
Ապագա իրանագետների հյուրն էր Իսլամական խորհրդի՝ Մեջլիսի պատգամավոր, իրանահայ Կարեն Խանլարյանը:

[01.12.16] **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում դասախոսությամբ հանդես եկավ ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը:

[02.12.16] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ. ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է**
Տասնմեկ երկրների առաջատար համալսարանների շուրջ 50 ուսանողներ հավաքվել են Հայաստանում՝ քննարկելու իրենց միավորող ու մտահոգող խնդիրները:

[02.12.16] **ԲԱՅԱՌԻԿ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՔԻՄԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**
Այսօր ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Սաղյանի մենագրության շնորհանդեսը:

[05.12.16] **ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԸ ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ**
Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը Վրաստանի Բորժոմի քաղաքում տեղի է ունեցել իրավաբանական կրթության ինտերակտիվ մեթոդների վերաբերյալ տարածաշրջանային վերապատրաստման ծրագիրը:

[06.12.16] **ԱՊԱԳԱ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԷՐ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ**
Դեկտեմբերի 5-ին ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ հանդիպեց ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիան:

[06.12.16] **ԵՊՀ ԹԻՄԸ «ACM-ICPC»-Ի ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ Է**
ԵՊՀ ծրագրավորող ուսանողները նվաճել են «ACM-ICPC» ծրագրավորման միջազգային օլիմպիադայի եզրափակիչ փուլի ուղեգիր:

[06.12.16] **ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ**
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց ՀՀ-ում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեին, ով Մայր բուհ էր այցելել կնոջ՝ Եկատերինե Բաքրաձեի և դեսպանատան ավագ խորհրդատու Նինո Ափցիաուրիի հետ:

[06.12.16] **ՆԱԶԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՉՀՈԳՆԵԼՆ Է**
Խոսքի՝ որպես հաջողության գրավական լինելու գաղտնիքներն այս անգամ բացահայտում էր հեռուստահաղորդավարուհի, դերասանուհի Նազենի Հովհաննիսյանը:

[07.12.16] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ**
Այսօր ԵՊՀ մարտական պատրաստության ակումբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ալեն Ղևոնդյանի հետ:

[08.12.16] **ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ**
Դեկտեմբերի 6-ին և 7-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում դասախոսություններով հանդես եկավ Բեռլինի Էլիս Սալոմոնի ինստիտուտի դասախոս Վոլֆգանգ Այխշթեդթերը:

[08.12.16] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԻՆ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Չկա հետո, կա հիմա» խորագրով սեմինար, որը վարում էր սեմինարավար Լիլիթ Ամիրշաղյանը:

[08.12.16] **ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԿԱՊԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ «Ուսուցումից աշխատաշուկա» խորագրով կլոր սեղան-քննարկում:

[09.12.16] **«ԽՈՍՔԸ ՄԵԾ ՈՒԺ, ՋԵՆՔ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻՔ Է»**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Հռետորական արվեստ. ինչպե՞ս ելույթ ունենալ» խորագրով սեմինար-դասընթաց: Այն վարում էր սեմինարավար Էդուարդ Այանյանը:

[12.12.16] **ԲԱՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻՈԼՈԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Այսօր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում «Սոցիոլոգիայի դերը քաղաքական որոշումների ընդունման գործում» թեմայով բաց դասախոսությամբ հանդես եկավ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանը:

[12.12.16] **ԲՈՒՀԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ. ՈՐՏԵՂԻ՞Ց ՄԿՍԵԼ ԵՎ Ո՞ՒՐ ԳՆԱԼ**
Հայկական և եվրոպական մի խումբ բուհերի ներկայացուցիչներ փորձում են ելքեր գտնել, թե ինչպես բուհը ֆինանսական սուղ միջոցների պայմաններում տանեն միջազգայնացման ճանապարհով:

[12.12.16] **ԵՊՀ ԹԻՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ**
Դեկտեմբերի 8-10-ը Աղվերանում տեղի ունեցավ միջբուհական դատախաղ:

[12.12.16] **ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
«Անի Պլազա» հյուրանոցում կազմակերպված մասնագիտական քննարկման առանցքում հանքային և ջրային ռեսուրսների շահագործման խնդիրներն էին:

[13.12.16] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑԻՆ ՀԱՂՈՐԴԱՎԱՐ ԱՎԵՏ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ**
Այսօր ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում Մայր բուհի ուսանողները հանդիպեցին ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, սիրված հաղորդավար Ավետ Բարսեղյանի հետ:

[13.12.16] **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**
Այսօր մեկնարկեց իրավագետ ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանը:

[13.12.16] **ԿԻՋԱԿԵՏՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆ ԵՆ**
Հայաստանյան կրթական համակարգի ներկայացուցիչները հավաքվել են՝ քննարկելու ոլորտում բարեվարքության և կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրները:

[14.12.16] **ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԲԱՐԵՀԱՋՈՂ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ**
Դասի ընթացքում ԵՊՀ Կինյան 1 մասնաշենքի լսարաններից մեկում հրդեհ էր բռնկվել, ուսանողներին տարհանել են, կան տուժածներ:

[14.12.16] **ԱՎԵԼԻ ՔԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՋԱՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆՎԵՐՆԵՐ ԿՀԱՆՁՆԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**
ԵՊՀ ուսանողական կառույցները հանդես են եկել բարեգործական ծրագրով. նվերներով լի պարկերը Ամանորին ընդառաջ «կուղևորվեն» Տավուշի մարզի սահմանամերձ և Արցախի Մարտակերտի ու Շահումյանի շրջանների մի շարք բնակավայրեր:

[14.12.16] **«ԱՆԱՆՁՆԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է ԻՍԿԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ». ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ**
Մեծանուն համալսարանական, վաստակաշատ պրոֆեսոր և իսկական հայ Գուրգեն Մելիքյանը բոլորեց 80-ամյակը:

[15.12.16] **ԹՎԱՑՑԱԼ ՀԱՅՏՆԻ, ԲԱՑՑ ԱՆՀԱՅՏ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԸ**
Պատմությանը հայտնի, գրականությանը անհայտ Ավետիս Ահարոնյանին բացահայտելու ճանապարհը միավորել էր ՀՀ Սփյուռքի նախարարությանը, ԵՊՀ-ին ու Համազգային հայ կրթական և մշակութային միությանը:

[15.12.16] **ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ԿԱՊԵՐՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց «Իրան-Հայաստան-Վրաստան. խաղաղ հարևանության և զարգացման տեսլականներ» խորագրով միջազգային գիտաժողովը:

[15.12.16] **ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ**
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ պրոֆեսորադասախոսական կազմի ամենամյա գիտաժողովը, որը նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին:

[15.12.16] **ՄԵԾԱՆՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆՆ ԱՅՍՕՐ ԿԴԱՌՆԱՐ 100 ՏԱՐԵԿԱՆ**
ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում այսօր նշեցին ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր Պետրոս Բեզիրգանյանի ծննդյան 100-ամյակը:

[15.12.16] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՍԵՐՏՈՒՄ ԵՆ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ-ում կայացավ «Խոսքը՝ որպես հաջողության գրավական» խորագրով սեմինար-դասընթացների շարքի չորրորդ՝ վերջին հանդիպումը:

[16.12.16] **«ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՎԱՐԴԱՆԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԵՎ ՆՎԻՐԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔՆ ԷՐ»**
25 տարի առաջ՝ դեկտեմբերի 16-ին, Հասանաբատ գյուղի մատույցներում հերոսաբար զոհվեց ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտ-ազատամարտիկ Վարդան Բախշյանը:

[16.12.16] **ԱՂՈԹՔԻ ՀՈԳԵԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**
Դեկտեմբերի 15-ին ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում տեղի ունեցավ սեմինար-քննարկում. թեման աղոթքի հոգեթերապևտիկ նշանակությունն էր:

[19.12.16] **ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԻՐ ԳՐԱՎԱԿԱՆԸ**
Դեկտեմբերի 16-ին ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ուսանողներին հյուրընկալվել էր Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանը:

[19.12.16] **«ԱՐՄԵՆՔԱ». ԾՐԱԳԻՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ԱՎԱՐՏԻՆ**
Այսուհետ հայկական բուհերի տված որակավորումը համադրելի է լինելու եվրոպական բուհերի որակավորմանը:

[19.12.16] **ԿՐԿՆԱԿԻ ԴԻՊԼՈՄՈՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՊԱԳԱ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Մայր բուհի ղեկավարությունը հանդիպեց ՌԴ ազգային հետազոտական համալսարանի էկոնոմիկայի բարձրագույն դպրոցի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի ներկայացուցիչներին:

[19.12.16] **ԱՊԱԳԱ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ**
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում այսօր դասախոսությամբ հանդես եկավ «Կիրառական տնտեսագիտություն և մաթեմատիկական մեթոդներ» մագիստրոսական ծրագրի ղեկավար Սերգեյ Սլոբոդյանը:

[20.12.16] **ԵՊՀ-ՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ Է ՆՈՐ ԻՆՍՏԻՏՈՒՏ**
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս տարվա վերջին, ամփոփիչ նիստը:

[21.12.16] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ ՏԱՏՅԱՆԱ ՄՈՍԿԱԼԿՈՎԱՆ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում ՌԴ մարդու իրավունքների հանձնակատար Տատյանա Մոսկալկովայի հետ:

[21.12.16] **ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ՏԱՐԻՆ**
Այսօր ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում (ՀՀԻ) տեղի ունեցավ 2016 թ.-ի գործունեությունն ամփոփող հաշվետու ասուլիս:

[23.12.16] **ԵՊՀ-Ն ՆՈՐ ՀՅՈՒՐԱՏՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ ՈՒՆԻ**
Այսուհետ ԵՊՀ ուսանողները ֆիզկուլտուրայի պարապմունքներն անցկացնելու են վերանորոգված դահլիճներում, հրաձգարանում ու մարզասրահում:

[23.12.16] **ԿԱՅԱՑԱՎ ԵՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ**
Դեկտեմբերի 23-ին ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 6-րդ տարեվերջյան նիստը, որը նախագահում էր ՀՀ նախագահ, ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը:

[23.12.16] **ՈՒԳԸ-Ն ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ԿԻՍԱՄՅԱԿԸ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԳԸ 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի ընդլայնված նիստը:

[26.12.16] **ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև կնքվեց համագործակցության հուշագիր:

[27.12.16] **ԱՄՓՈՓՎԵՑԻՆ «ՊԱԼԵԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
Դեկտեմբերի 26-ին ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնը կազմակերպել էր միջոցառում, որի ընթացքում ամփոփվեցին գրանցված արդյունքները:

[27.12.16] **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆ Է**
Այսօր ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվեց «Ուսանողի մշակութային ինքնորոշումը և արժեքները» խորագրով սեմինար:

[27.12.16] **ԹԱԼԻՇԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՀԱՅ ԵՎ ԹԱԼԻՇ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում անցկացվեց «Թալիշներ. պատմություն և արդիականություն» թեմայով կլոր սեղան-քննարկում:

[27.12.16] **ԵՊՀ-Ն ՈՒ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ԵՆ**
ԵՊՀ-ն և ՀՀ բնապահպանության նախարարությունը տարիների պատմություն ունեցող համագործակցությունը դրեցին պաշտոնական հիմքերի վրա:

[27.12.16] **ՆՈՐ ԳՐՔԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈԼՈՐՏՈՒՄ**
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ամբիոնի կողմից հրատարակված 13 անուն գրքերի շնորհանդեսը:

[27.12.16] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԺՊԻՏՆԵՐ ՆՎԻՐԵՑԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ**
Դեկտեմբերի 24-29-ը համալսարանականները նվեր-պարկերով այցելել էին Արցախ և Տավուշի մարզի սահմանամերձ գյուղեր՝ այնտեղի մանուկների մեկ օրը հեքիաթի վերածելու, ամանորյա տոնական տրամադրություն փոխանցելու համար:

[28.12.16] **ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՆԻ**
ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահության նիստում Մայր բուհի ՈՒԽ նախագահ ընտրվեց Սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանող Արմեն Խաչիկյանը:

[28.12.16] **2500 ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՆՎԵՐՆԵՐ ԿՀԱՆՁՆԻ ԵՊՀ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ**
Արդեն մի քանի տարի է, ինչ ԵՊՀ աշխատակիցների 3-7 տարեկան երեխաները և թոռնիկները ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կողմից ստանում են ամանորյա նվերներ:

[29.12.16] **ԵՊՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԿՈՒՆԵՆԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
2017 թ.-ից ԵՊՀ աշխատակիցները ևս բուժօգնության դիմելիս կկարողանան օգտվել առողջության ապահովագրությունից:

[31.12.16] **ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**
Մի քանի օրից բոլորս կամփոփենք անցնող տարին՝ ակնկալելով հույսերով, սիրով ու խաղաղությամբ լեցուն մի նոր տարի:

[11.01.17] **ԵՊՀ-ՈՒՄ ԴԱՍԵՐԸ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ ԵՆ ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՑ**
Մայր բուհում առկա ուսուցման համակարգի սովորողների համար քննաշրջանը սկսվել է հունվարի 9-ից և կանցկացվի մինչև հունվարի 27-ը:

[16.01.17] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԴՈՒՇՄԱՆ ՎԱՐԴԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ**
Հունվարի 13-ին Մայր բուհի ներկայացուցիչները ԵՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկ Վարդան Ստեփանյանի (Դուշման Վարդան) տուն-թանգարանին նվիրաբերեցին համակարգիչ և գրքեր:

[23.01.17] **ՀԱՅՏՆԻ Է «GENERATION Z» ԾՐԱԳՐԻ ԵՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**
Հունվարի 20-ին տեղի ունեցավ «Generation Z» ծրագրի առաջին բիզնես խաղ-մրցույթը, որի արդյունքում ընտրվեց ԵՊՀ ներկայացուցիչը:

[24.01.17] **ԵՊՀ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**
ԵՊՀ աշխատողների բժշկական ապահովագրության պայմանների մասին փաստաթղթերը տեղադրված են բուհի պորտալի «Փաստաթղթեր» կայքում, և առաջիկա շաբաթների ընթացքում կկազմակերպվեն ընձեռված հնարավորությունների ներկայացումներ:

[26.01.17] **ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ ԵՊՀ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼՈՎ**
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը ԵՊՀ բրոնզե մեդալներով պարգևատրեց «Լավագույն ուսանող-2016» մրցույթի հաղթողներին:

[26.01.17] **ԵՊՀ-ՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ Է ՍՏԵՂԾՎԵԼ**
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս տարվա առաջին նիստը՝ օրակարգային 6 և ընթացիկ հարցերով:

[27.01.17] **ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼ ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐԻՆ**
ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից պարգևատրվել է Երախտագիտության մեդալով:

[27.01.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՐԵՆԴԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**
Համալսարանականների հյուրն էր «City Branding» թիմի ղեկավար Վասիլի Դուբեյկովսկին:

[27.01.17] **ԵՊՀ ՈՒԽ-Ն ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԿՄՇԱԿԻ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԽ նախագահության նիստը՝ օրակարգային 9 և ընթացիկ հարցերով:

[28.01.17] ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ 25 ՏԱՐԵԿԱՆ Է
1991 թ.-ից ի վեր Հայոց բանակը կայացման և զարգացման փուլում էր: Տարիների ընթացքում այն դարձավ հզոր և անխախտ, որն ունակ է պաշտպանելու հայրենիքի սահմանները:

[01.02.17] ԵՊՀ 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ
2019 թ.-ին Հայաստանի Մայր բուհը մեծ շուքով կտոնի իր 100-ամյա հոբելյանը:

[03.02.17] «ՆԱ ԴԱՍԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ՕՐԻՆԱԿ Է». ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ռեկտորատի նիստ, որը նվիրված էր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ պրոֆեսոր, Կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ Ռուբեն Հարությունյանի 70-ամյակին:

[06.02.17] ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ՄԻԱՍԻՆ ՊԱՅՔԱՐԵԼ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ
Փետրվարի 3-ին ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնը և Հոգեուռուցքաբանության հայկական ասոցիացիան իրականացրին «Քաղցկեղի ստվերում» խորագրով սեմինար-քննարկումը:

[08.02.17] ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԸ ԿՐԿԻՆ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի պատվիրակությանը՝ տնօրեն Գիորգի Կեկելիձեի գլխավորությամբ:

[09.02.17] ՆՈՐ ՍՐԱՀԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԿԻՋԲ ԿԴԱՌՆԱ
Այսօր ԵՊՀ գրադարանի մասնաշենքում տեղի ունեցավ «Հովհաննես Ադամյան» սրահի բացման հանդիսավոր արարողությունը:

[13.02.17] ԵՊՀ ԹԻՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԱՄՆ-ՈՒՄ
Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ-մրցույթի հաղթող ԵՊՀ թիմը Հայաստանը կներկայացնի ԱՄՆ-ում ապրիլին կայանալիք նույն մրցույթի միջազգային մրցափուլում:

[14.02.17] ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՎԱՃԱՌԵԼ
ԵՊՀ-ում այսօր տեղի ունեցավ բիզնես փորձագետ Վահե Այվազյանի «Էմոցիոնալ վաճառքներ» թեմայով դասընթացը:

[15.02.17] «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔ ԿԱՐՈՂ Է ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՎԵԼ». ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Այսօր ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը ԵՊՀ-ում հանդիպեց բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ:

[15.02.17] ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ
ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանն առաջին անգամ հանդիպեց ԵՊՀ ուսանողության հետ:

[16.02.17] ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԷՐ
Փետրվարի 15-ին ԵՊՀ Հովհաննես Ադամյանի անվան սրահում տեղի ունեցավ «Թվային տեխնոլոգիաների մասին» հեռավար դասախոսությունների շարքի առաջին հանդիպումը:

[16.02.17] ԹԱԼԻՇ ԼՐԱԳՐՈՂ ՇԱՀԻՆ ՄԻՐԶՈԵՎՆ ԱՅՑԵԼԵՑ ԵՊՀ
Թալիշ հասարակական-քաղաքական գործիչ Շահին Միրզոևը հանդիպեց համալսարանականների հետ:

[16.02.17] ԱՐԱՄ ՓԱԽՉԱՆՅԱՆ. «ՈՎՔԵՐ ՊԱՏՐԱՍՏ ՉԵՆ ՓՈԽՎԵԼՈՒՆ, ԿՎԵՐԱՆԱՆ»
Այսօր ԵՊՀ ուսանողները հյուրընկալել էին «Այբ» դպրոցի տնօրեն, «ABBYY» ընկերության հիմնադիր Արամ Փախչանյանին:

[20.02.17] **ԳՐՔԻՑ ԴԵՊԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ. ՏՈՆԸ «ԳՐՔՈՏ» ԷՐ**
ԵՊՀ ուսանողները Գիրք նվիրելու օրվա առթիվ կազմակերպել էին մի շարք միջոցառումներ:

[20.02.17] **ԵՊՀ-ՈՒՄ ՎԵՐՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐԸ**
Բանավեճի առաջնությամբ ԵՊՀ ուսանողական խորհուրդը վերականգնում է ակումբի գործունեությունը:

[20.02.17] **ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄՐՑՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳՐՔԻ ՏՈՆԻՆ**
«Գրքամարտ» ինտելեկտուալ մրցույթի նպատակն էր խթանել սերն ընթերցանության նկատմամբ և խրախուսել լավագույն ուսանողներին:

[21.02.17] **ԱՅՍՕՐ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է**
Մայրենի լեզվի օրվան նվիրված միջոցառումների շրջանակում ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դասախոսներն այցելում են Երևանի ու ՀՀ մարզերի ավագ և հիմնական դպրոցներ:

[22.02.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՅՈՒՐԱՅՆՈՒՄ ԵՆ ՄԵՐՉԵՆԴԱՅԶԻՆԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ «Հովհաննես Ադամյան» սրահում անցկացվեց «Մերչենդայզինգի հիմունքներ» խորագրով սեմինար-դասընթաց:

[22.02.17] **ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ՆԵՐԿԱՅԻՍ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՐԵԿԱՄ**
ՀՀ-ում Գերմանիայի նախկին դեսպան Հանս-Յոխեն Շմիդտը դարձյալ ԵՊՀ-ում է, բայց արդեն ոչ որպես պաշտոնյա:

[23.02.17] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՆՇԵՑԻՆ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ**
Այս տարի նույնպես Վարդանանց սուրբ նահատակներին նվիրված միջոցառում էր կազմակերպվել հայոց հոգևոր մայրաքաղաքում:

[28.02.17] **ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԵԾ ՊԱՀԱՆՋԱՐԿ ԿԱ**
Այսօր ԵՊՀ իրավաբանական կլինիկայի և «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել էր «Առողջապահական իրավունք» խորագրով դասընթաց:

[01.03.17] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ ՌԱՖԻԿ ՄԱՆՍՈՒՐԸ**
Այսօր ԱՄՆ փոխդեսպան Ռաֆիկ Մանսուրը ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության նախաձեռնությամբ այցելեց Մայր բուհ:

[01.03.17] **ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ. «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾ ԱՆԵԼԻՍ ԱՅՆ ՍԻՐՈՎ ՈՒ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՐԵ՛Ք»**
Այսօր ԵՊՀ ՈՒԽ-ի նախաձեռնությամբ «Հաջողության նախագիծ» ծրագրի շրջանակում ուսանողները հանդիպեցին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի հետ:

[02.03.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀՆ ԻՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼ**
Այսօր ԵՊՀ մի խումբ ուսանողներ այցելեցին «Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա» ընկերություն և տեղում ծանոթացան արտադրական գործընթացին:

[02.03.17] **ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՓՈՒԼ Է ԹԵՎԱԿՈՒՄ**
ԵՊՀ-ի և ՌԴ Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի միջև համագործակցությունը վերջին տարիներին ակտիվորեն ընդլայնվում է:

[02.03.17] **ԵՊՀ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 13 և ընթացիկ հարցերով:

[03.03.17] **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ**
Այսօր ԵՊՀ-ում Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հանդիպեցին ՌԴ ռադիոէլեկտրոնիկայի ոլորտի առաջատար մասնագետների պատվիրակության հետ:

[03.03.17] **ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ. ՀԱՅԱՑՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Պետական բարեփոխումների 3-րդ արդիականացումը Ղազախստանում. հայացք Հայաստանից» խորագրով կլոր սեղան-քննարկում:

[03.03.17] **ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻՑ ՅՈԹԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ ԵՆ**
Այսօր Երևանի պետական բժշկական համալսարանում ամփոփվեցին «Լավագույն ուսանող-2016» հանրապետական մրցույթի արդյունքները. հաղթողներից յոթը ԵՊՀ ուսանողներ են:

[04.03.17] **«ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2017»-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՇՈՒՐՋ 3000 ԱՇԱԿԵՐՏ**
Այսօր ԵՊՀ-ում և ՀՀ բոլոր մարզերում անցկացվեց դպրոցականների ամենամյա 9-րդ օլիմպիադայի 1-ին փուլը:

[06.03.17] **«ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԼԻՆԵԼ ԶԻՆՎՈՐԱԿԱՆԻ ԿՈՂՔԻՆ ԵՎ ԱԶԱԿՑԵԼ»**
ԵՊՀ մարտական պատրաստության ակումբի անդամները մարտի 3-ին այցելեցին ՀՀ ԶՈՒ երևանյան զորամասերից մեկը:

[06.03.17] **ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՎԱՌ ԿՄՆԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՍՐՏԵՐՈՒՄ**
Այսօր ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում տեղի ունեցավ պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի հիշատակին նվիրված հուշ-ցերեկույթ, որի շրջանակում էլ հանրությանը ներկայացվեց Նիկողայոս Ադոնցի «Երկեր»-ի 7-րդ հատորը:

[06.03.17] **ՏՈՆԱՎԱՃԱՌ ԵՊՀ-ՈՒՄ՝ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԵՐՈՎ ՈՒ ՄՈՏԻՎՆԵՐՈՎ**
ԵՊՀ-ում կազմակերպվել է «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» բարեգործական ցուցահանդես-վաճառք:

[07.03.17] **ՄԵՆԴԵԼԵԵՎԻ ԱՂՅՈՒՍԱԿԻ 118-ՐԴ ՏԱՐԸ ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԱՆՈՒՆՆ Է ԿՐՈՒՄ**
Մարտի 2-ին ՌԴ ԳԱ գիտնականների կենտրոնական տանը տեղի է ունեցել Մենդելեևի պարբերական աղյուսակը համալրած երեք նոր տարրերի (115՝ Moscovium (Mc), 117՝ Tennessine (Ts) և 118՝ Oganesson (Og)) հայտնաբերմանն ու անվանակոչմանը նվիրված հանդիսավոր արարողությունը:

[07.03.17] **ՀԱՅՏՆԻ ՖԻԶԻԿՈՍԸ՝ ԵՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՅՈՒՐ**
Տեսական ֆիզիկա ուսումնասիրող ուսանողները հնարավորություն ունեն լսելու ռուս հայտնի գիտնական Ալեքսանդր Բելավինի դասախոսությունները:

[07.03.17] **ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՀԵՀ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ առաջին կուրսի ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների հավաստագրերի հանձնման արարողությունը:

[09.03.17] **ՀԱԼԵՊԸ ՉԼՔԱԾ ՄԻԱԿ ՀՅՈՒՊԱՏՈՍՆ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՐԱՋԱՏ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս Տիգրան Գևորգյանը հանդիպեց դասախոսների և ուսանողների հետ:

[10.03.17] **ԱՊԱԳԱ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ «ԱՄՆ ՄԶԳ»-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «USAID Armenia-ի առաքելությունը Հայաստանում և նրա հեռանկարները» խորագրով սեմինար-քննարկում:

[10.03.17] **ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԲԱՆԿՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ «Հովհաննես Ադամյան» սրահում տեղի ունեցավ հանդիպում «Ինեկոբանկ»-ի ներկայացուցիչների հետ:

[10.03.17] **ՄՐՑԵՑԻՆ ՈՒՍԱՆՈՂ ԵՎ ԱՍՊԻՐԱՆՏ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԸ**
Մարտի 9-10-ը Մայր բուհում տեղի ունեցավ ԵՊՀ արագ շախմատի անհատական առաջնություն:

[10.03.17] **ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ**
Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոս Կոցիասն այսուհետ ԵՊՀ պատվավոր դոկտոր է:

[13.03.17] **ՀԱՅՏՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ՝ ԵՊՀ-Ի 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ**
ԵՊՀ 100-ամյա հոբելյանին ընդառաջ՝ Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը ներկայացնում է «Իմ տունն այստեղ է» նախագիծը:

[13.03.17] **ԴԱՏԱՎՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԸ**
Ապագա իրավագետների համար դասախոսություն կարդաց Բոննի առաջին ատյանի դատարանի դատավոր Ալեքսանդր Ֆյուլինգը:

[13.03.17] **ԳՐՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆ ԵՊՀ-ՈՒՄ**
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողների կողմից ստեղծվել է «Գրքաշրջանառության անկյուն» (Bookcrossing corner):

[14.03.17] **ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՔԻՑ**
ՀՀ դատական նոր օրենսգրքի նախագիծը մինչ խորհրդարանական քննարկումների փուլ մտնելը ներկայացվեց ԵՊՀ ուսանողներին:

[14.03.17] **ՆՈՐ ԳՐՔԵՐԸ ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՆ**
Այսօր ՀՀ Սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանի երկու գրքերի շնորհանդեսը:

[15.03.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ԳԱՐՈՒՆ Է ՈՒ ՍԵՐ**
Մարտի 14-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում թևածում էր տոնական, գարնանային տրամադրությունը:

[15.03.17] **ՍՊԱՅԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի ներկայացուցիչներն այսօր հանդիպեցին ԵՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողների հետ:

[15.03.17] **ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԵՊՀ ՈՒԳԸ 70-ԱՄՅԱԿԻՆ**
Այսօր ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ «Ռուսաց լեզվաբանություն, գրականություն և միջմշակութային հաղորդակցություն. արդի հիմնահարցեր» խորագրով գիտաժողով:

[15.03.17 **«ՄԵՆՔ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԱԶԳ ԵՆՔ». ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Լ. Ազգալդյանի անվան մարտական պատրաստության ակումբը կազմակերպել էր հանդիպում «ԱՍԱԼԱ»-ի մարտիկ Վարուժան Կարապետյանի հետ:

[15.03.17] **«ԻՄԱՍՏ ԴՐԵ՛Ք ԱՅՆ ԱՄԵՆԻ ՄԵՋ, ԻՆՉ ԱՆՈՒՄ ԵՔ»**
Այսօր ԵՊՀ ՈՒԽ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հաջողության նախագիծ» ծրագրի հերթական սեմինար-դասընթացը:

[16.03.17] **ԱՎԱՐՏՎԵՑ ԲԱՆԱՎԵՃԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ՈՒԽ բանավեճի ակումբի կազմակերպած 2017 թ.-ի բանավեճի ակումբային առաջնության եզրափակիչ փուլը:

[16.03.17] **ԳԱՂԱՓԱՐԸ ԲԻԶՆԵՍ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ**
Հայկական գյուտերի ու նորարարությունների մասին դասախոսությամբ այսօր մեկնարկեց ԵՊՀ ձեռներեցության կենտրոնի հերթական խոշոր ծրագիրը:

[17.03.17] **ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՇՎԵՅՑԱՐԱՑԻ ՊՐՈՖԵՍՈՐԻ ՕԲՅԵԿՏԻՎՈՎ**
Այսօր ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի 2-րդ հարկում կազմակերպվել էր «Սահմաններից այն կողմ. Հարավային Կովկասի մոռացված փախստականները» խորագրով ցուցահանդես:

[20.03.17] **ԵՊՀ-ԱԿԱՆՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱԱԿՏԻՎ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ**
Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շահառուների շուրջ ¼-ը ԵՊՀ մասնագետներն են, իսկ համակարգողների մեծ մասը՝ ԵՊՀ շրջանավարտներ:

[20.03.17] **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ**
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որը նպատակ ունի նպաստել ԱրՊՀ-ում իրավաբանական կրթության կատարելագործմանը:

[20.03.17] **ՎՐԱՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՀԱՐՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻ ԴԱՏԻՆ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Բիբլիական երեք նովել» վերնագրով գրքի շնորհանդեսը:

[20.03.17] **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՊԱՏՄԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ Է**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ «Պատմագետների դպրոց-2017» խորագրով մասնագիտական հնգօրյա դպրոցի բացման արարողությունը:

[20.03.17] **ԱՐՑԱԽՅԱՆ ԱՅՑԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆԻՆ**
Մարտի 17-19-ը ԵՊՀ ուսանողները պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ռեկտոր Արամ Սիմոնյանի ուղեկցությամբ կրկին Արցախում էին: Այցն այս անգամ նվիրված էր Արցախյան ազատամարտի հերոս Լեոնիդ Ազգալդյանի ծննդյան 75-ամյակին:

[21.03.17] **ՏՈՆԸ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԼԱՎ ԱՌԻԹ**
Սոցիալական ոլորտի պատասխանատուների և միջազգային փորձագետների մասնակցությամբ այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց Սոցիալական աշխատողի օրվան նվիրված համաժողովը:

[23.03.17] **ԵՊՀ-ՈՒՄ ՑՈՒՑԱԴՐՎԵՑ «ԿՅԱՆՔ ՈՒ ԿՌԻՎ 2» ՖԻԼՄԸ**
Մարտի 22-ին Մշակույթի կենտրոնի դահլիճում կայացավ «Կյանք ու կռիվ 2» ֆիլմի ցուցադրությունը, ինչին հաջորդեց համալսարանականների հանդիպումը ֆիլմի ստեղծագործական կազմի հետ:

[23.03.17] **ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՅՈԹ ՀԱՏՈՐՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու-2016» յոթ հատորների շնորհանդեսը:

[24.03.17] **ԳՐՔԵՐԻՑ ԵՐԵՔԸ ՀԵՂԻՆԱԿԵԼ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ**
Մարտի 23-ին ՀՀ Սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել մի շարք գրքերի շնորհանդես, որոնցից մի քանիսը լույս են տեսել ԵՊՀ հրատարակչության կողմից:

[24.03.17] **ԼԻԴԵՐ ԼԻՆԵԼՈՒ ԲԱՂԱԴՐԱՏՈՄՍ ԱՐԱՄ ԱՆԱՆՅԱՆԻՑ**
Մեկնարկեց «Լիդերության դերը կարիերայի զարգացման գործում. բուհ-ձեռնարկություն համագործակցության նոր ձևաչափ» խորագրով ծրագիրը:

[28.03.17] **ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՆՇԵՑԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ**
Ավանդույթի համաձայն՝ այս տարի ևս ԵՊՀ մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ մի խումբ համալսարանականներ այցելեցին Կոմիտասի անվան պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայ բեմի հանճարներին:

[28.03.17] **ՄԻԳՐԱՑԻԱ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՆԳՆԱԾ Է ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԻ ԱՌՋԵՎ**
Միգրացիայի արդի խնդիրներն ու համաշխարհային զարգացումներն ի մի բերելու համար ԵՊՀ-ում հավաքվել էին ոլորտի մասնագետները, միջազգային կառույցներն ու փորձագետները:

[28.03.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**
Այսօր ԵՊՀ-ի և «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի միջև կնքվեց համագործակցության հուշագիր:

[28.03.17] **ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՆ Է**
Այսօր ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում մեկնարկեց «Շրջակա միջավայրի պահպանություն և կառավարում հանքարդյունաբերության ոլորտի աշխատակիցների համար» խորագրով եռօրյա վերապատրաստման ծրագիրը:

[29.03.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ**
Այսօր ուսանողների հյուրն էր «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերության մանրածախ ապահովագրության գծով գործադիր տնօրենի տեղակալ Գրիգոր Նավասարդյանը:

[29.03.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ՆՇՈՒՄ ԵՆ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՕՐԵՐԸ**
Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում ցուցադրվեց «Մութ հովիտ» ֆիլմը:

[29.03.17] **ՅՈԹ ՔԱՂԱՔ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՄ ՓՈԽԱՆԱԿԵԼ ՔՈՆԻ ՀԵՏ**
Կազմի՛ր քո տուրիստական երթուղին և մեկնի՛ր քառօրյա ուղևորության դեպի ԵԱՏՄ և Կենտրոնական Ասիայի հայտնի քաղաքներից մեկը:

[29.03.17] **ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
ԵՊՀ ռեկտորն ու Հայաստանում «Beeline» ընկերության գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը համագործակցության հուշագիր են ստորագրել:

[30.03.17] **ԼՍԱՐԱՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԿԿՐԻ ՀՈՂՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՈՒՆԸ**
Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում բացվեց անվանի գիտնական, պրոֆեսոր Հողմիկ Սարգսյանի անունը կրող լսարանը:

[30.03.17] **ԳԵՐՄԱՆԱՑԻ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՐՄԿԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ ԷՐ**
Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում դասախոսությամբ հանդես եկավ Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Լյուդվիգ Պոլը:

[30.03.17] **ԵՊՀ ՈՐՈՇ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ**
Այսօր անցկացվեց ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 9 և ընթացիկ հարցերով:

[31.03.17] **ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**
Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Ներքին աուդիտի զարգացման խնդիրները ՀՀ-ում» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Արա Չալաբյանը:

[31.03.17] **ԱՄՓՈՓՎԵՑ «ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2017»-Ը**
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «ԵՊՀ օլիմպիադա-2017»-ի փակման և պարգևատրման հանդիսավոր արարողությունը:

[03.04.17] **ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ՝ ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓՈՎ**
Այսօր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԽ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Ամենախելացի սոցիոլոգը» ինտելեկտուալ խաղ-մրցույթը:

[04.04.17] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԵՌԱԲԼՈՒՐ**
Ապրիլի 3-ին ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի ՈՒԽ-ի նախաձեռնությամբ ուսանողներն այցելեցին Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակին:

[05.04.17] **ԵՌԱԼԵԶՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ Դիվանագիտական և քաղաքական տերմինների հայերեն-չինարեն և ռուսերեն-չինարեն բառարանի շնորհանդեսը:

[05.04.17] **ԵՐԹԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**
Ապրիլի 4-ին ԵՊՀ մարտական պատրաստության ակումբի նախաձեռնությամբ մի խումբ ուսանողներ Մայր բուհի կենտրոնական մասնաշենքի բակից ոտքով շարժվեցին դեպի ՀՀ ՊՆ «Եռաբլուր» զինվորական պանթեոն:

[05.04.17] **ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՇՈՒՆՉԸ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ**
Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում ցուցադրվեց «Ճակատագրական կինը» ֆիլմը:

[05.04.17] **Ո՞Վ Է ԱՄԵՆԱԼԱՎԸ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ ԳՐԱԲԱՐԻՆ. ՄՐՑՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**
ԵՊՀ մի շարք ֆակուլտետների ուսանողներ միմյանց հետ ուժերը չափում են գրաբարի իմացությամբ:

[06.04.17] **ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՐՔԵՐԸ**
Այսօր Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում, որի առանցքում ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանի՝ հայ հերոսուհիների մասին գրքերն էին:

[06.04.17] **ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԷՐ**
Սորբոնի համալսարանի պրոֆեսորը դասախոսություն կարդաց ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար:

[06.04.17] **ՎԱՐՊԵՏԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ԱՐԴԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ԲՈԼՈՐԻՆ**
Այսօր Ավ. Իսահակյանի անվան գրադարանում տեղի ունեցավ «Ավետիք Իսահակյանի նամակները» գրքի շնորհանդեսը:

[07.04.17] **40 ՏԱՐԻ ԱՆՑ. ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ՝ ԵՊՀ**
40 տարվա ընդմիջումից հետո կուրսին կրկին միավորելու լավագույն առիթը կարող է լինել այդ կուրսի ուսանողներից մեկի ցուցահանդեսը:

[07.04.17] **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՑՆԵՆ**
Ապրիլի 8-ից կմեկնարկի ԵՊՀ երիտասարդ դասախոսների և գիտաշխատողների համար նախատեսված քառօրյա դասընթացը, որի նպատակն է բարձրացնել նրանց մարտական պատրաստությունը:

[10.04.17] **ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐԻ ԵՐԵԿՈ ԵՊՀ-ՈՒՄ**
Ապրիլի 7-ին ԵՊՀ ՈՒԽ-ի նախաձեռնությամբ Մայր բուհի կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպվել էր ազգագրական պարերի երեկո:

[10.04.17] **ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆ ՈՒՂՂՎԱԾ ԷՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ**
Ապրիլի 8-ին Քաջարան քաղաքում տեղի ունեցավ հանքարդյունաբերության ոլորտի աշխատակիցների համար նախատեսված վերապատրաստման դասընթացի փակման և մասնակիցներին հավաստագրերի հանձնման արարողությունը:

[10.04.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԲԻԶՆԵՍ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ**
ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոնի կողմից նախաձեռնած դասընթացի շրջանակներում ուսանողները հյուրընկալեցին ոլորտի ճանաչված փորձագետ Ֆրունզիկ Ոսկանյանին:

[10.04.17] **ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ԵՐԵԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՄԱՆ ՕՐՆ ԷՐ**
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոս Լևոն Լաճիկյանը ԵՊՀ պատմության թանգարանին նվիրեց Մայր բուհի կենտրոնական մասնաշենքի գծանկարը:

[10.04.17] **«ՈՒԶՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԴԱՌՆԱ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**
Համո Սահյանը Մարտունու և Արցախի բարբառներով է «խոսում», Հովհաննես Թումանյանը՝ Երանոսի, «Ալպիական մանուշակն» էլ հնչում է Գորիսի խոսվածքով:

[11.04.17] **ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ**
Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետում մեկնարկեց Հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի հիմնադրման 20-ամյակին նվիրված գիտաժողովը:

[11.04.17] **ՄԱՐԵԿ ՄԻԽԱԼԱԿ. «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀՆԱՐԱԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՉԵՆ»**
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներն այսօր հյուրընկալել էին Լեհաստանի երեխաների իրավունքների պաշտպան Մարեկ Միխալակին:

[12.04.17] **«ՁԵՐ ԳՐԱՆՑԱԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԽՎԱԾ ԵՆ ՄԻԱՅՆ ՁԵԶԱՆԻՑ». ՄՈՒՇԵՂ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ սեմինար-հանդիպում Երիտասարդ գործատուների միության նախագահ, գործարար, բիզնես թրեյներ Մուշեղ Ավետիսյանի հետ:

[12.04.17] **ՀԱՅՏՆԻ Է ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԻՆՈՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ամենամյա «Կինոմանիա» մրցույթի եզրափակիչ փուլը:

[12.04.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԵԿ ԳՐՔՈՒՄ**
Հանրությանը ներկայացվեց «Երախտաւոր դասախօսներ (դիմաքանդակային հպումներ)» գիրքը, որը նվիրված է ԵՊՀ 95-ամյակին:

[13.04.17] **ԵՊՀ-Ն ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՀԵՏ**
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «Միջազգային ինտեգրման նոր եղանակները հետխորհրդային տարածքում» թեմայով հեռավար գիտաժողով:

[13.04.17] **ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊՆ ԷՐ**
Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում մեկնարկեց «Լեզվի մշակութային հայեցակերպը» խորագրով երկօրյա գիտաժողովը:

[13.04.17] **ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները» թեմայով գիտաժողով:

[14.04.17] **ԵՊՀ ՈՒԽ-Ն 23 ՏԱՐԵԿԱՆ Է**
Տոնական օրվա առիթով ԵՊՀ ՈՒԽ-ն այսօր կազմակերպել է մի շարք միջոցառումներ, որոնց մեկնարկը տրվեց պարային ֆլեշմոբով:

[14.04.17] **ՆՈՐ ԴՊՐՈՑԸ՝ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԽ-ի «Զարգացում» դպրոցի բացման արարողությունը:

[14.04.17] **ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՎ**
ԵՊՀ պատմության ֆակուլտետում Նիկոլ Դումանի 150-ամյակը նշում են արցախցի գործընկերների հետ:

[14.04.17] **ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ՝ ՎԱՎԵՐԱԳՐՈՂԻՑ**
Այսօր ԵՊՀ-ում համալսարանականները հանդիպեցին «Դիրքերում» հաղորդաշարի հեղինակ, կինոռեժիսոր Արշակ Զաքարյանի հետ:

[14.04.17] **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**
Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկեց տնտեսագիտության առանձին թեմաներին նվիրված սեմինարների շարքը:

[14.04.17] **ԱՅՍՕՐ ՏՈՆ Է ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՈՒՍԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Տոնական օրն այսօր ավարտվեց ԵՊՀ ՈՒԽ ծննդյան օրվան նվիրված համերգ-մրցանակաբաշխությամբ:

[18.04.17] **«ՄԵՐ ՀԱՆՃԱՐԻ ՀԱՆԴԵՊ ՄԵՆՔ ԱՆՓՈՒՅԹ ԵՆՔ ԳՏՆՎԵԼ»**
«Ազգային գրադարանային շաբաթն» այս տարի մեկնարկեց Եղիշե Չարենցի 120-ամյակին նվիրված միջոցառմամբ:

[19.04.17] **ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՄՆԵԼ ԴՐԱՆ**
Այս կարևոր հարցի պատասխանը ԵՊՀ ուսանողներին այսօր տվեցին նյույորքաբնակ մասնագետները:

[19.04.17] **«PICASA». ԲՈՒՀԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ**
Արևելյան գործընկերության երկրների բուհերը դեպի միջազգայնացում տանող «PICASA» նախագիծն ամփոփում է արդյունքները:

[19.04.17] **ՀԱՄԵՐԳԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՖՐԱՆԿՈՖՈՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻՆ**
Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնը Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի հետ նախաձեռնել էր արդեն ավանդույթ դարձած համերգային ծրագիրը:

[19.04.17] **ԱՊԱԳԱ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՂԹԵՑԻՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ**
Այսօր ամփոփվեց ֆուտբոլի միջֆակուլտետային առաջնությունը. եզրափակչում մրցում էին Միջազգային հարաբերությունների ու Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների թիմերը:

[19.04.17] **ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵԶԴԻՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻՆ**
Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում տեղի ունեցավ «Եզդիների կրոնական աշխարհայացքը» գրքի շնորհանդեսը:

[20.04.17] **ԱՎԱՐՏՎԵՑ «Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ԽԱՂԻ ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ**
Ինտելեկտուալ խաղերի խորհրդանիշ բուն այս տարի «ուղևորվեց» Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ:

[20.04.17] ՀԱՂԹԱՆԱԿ՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐՏԻՍՏԻԶՄ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ
ԵՊՀ մշակույթի կենտրոնի մենակատարները մասնակցել են Ֆրանսիական երգի ամենամյա փառատոնին:

[21.04.17] ԵՊՀ ԹԻՄԸ ԱՄՆ-ՈՒՄ ՏՊԱՎՈՐԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Է ԳՐԱՆՑԵԼ
ԵՊՀ իրավագետների թիմը Ֆիլիպ Ջեսափի անվան իրավունքի դատախաղ-մրցույթի միջազգային մրցափուլից վերադարձել է գոհացուցիչ արդյունքներով:

[21.04.17] ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ ԱՄՓՈՓԵՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցան «Ռուսանողական օլիմպիադա-2017»-ի արդյունքների ամփոփումն ու պարգևատրման արարողությունը:

[21.04.17] «UNIVERSITY TOUR» ՆԱԽԱԳԻԾՆ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՆԱԵՎ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ
Այսօր ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու «Global Media Lab» կազմակերպության համագործակցության շրջանակում անցկացվեց կրթական ոչ ֆորմալ սեմինար:

[24.04.17] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ
Այսօր Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է. ԵՊՀ ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները և ուսանողները ծաղիկներ դրեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում:

[25.04.17] ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆՆԵՐԸ ՆԱԵՎ ՄԱՅՐ ԲՈՒՀԻՑ ԵՆ
Ապրիլի 22-24-ը տեղի ունեցած NCUMC-ի (North Countries Universities Mathematical Competition) միջազգային ուսանողական օլիմպիադայում Մայր բուհի ուսանողները հավաքել են բարձր միավորներ՝ արժանանալով 1-ին և 3-րդ կարգի դիպլոմների:

[25.04.17] ԱՊԱԳԱ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ ՎԻՐՋԻՀԱՆ ԶԻՖԻՈՂԼՈՒՆ ԷՐ
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում ստամբուլահայ գրող, հրապարակախոս, գրականագետ, «Ակօս» թերթի նախկին խմբագիր Վիրջիհան Զիֆիողլուի հետ:

[25.04.17] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԱԶԳ-ԲԱՆԱԿ-2017» ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ
Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում ապրիլի 20-ին տեղի ունեցավ «Ազգ-բանակ-2017» խորագրով համաժողով՝ նվիրված ռազմակրթական ոլորտի հիմնախնդիրներին:

[26.04.17] ԱՊԱԳԱ ԻՐԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՔՐԴԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՆԵՐՆ ԵՆ
Ապրիլի 25-ին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում տեղի ունեցավ «Սիրիայի քրդական բարբառները. ձևաբանական և բառապաշարի ընդհանուր ակնարկ» խորագրով դասախոսությունը:

[26.04.17] ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ՝ ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ
Այսօր Մայր բուհում Հնդկաստանի փոխնախագահ Մոհամմադ Համիդ Անսարիին շնորհվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

[26.04.17] ԵՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ EXPO-2017»-ԻՆ
Այսօր «Yerevan expo» ցուցահանդեսային համալիրում մեկնարկեց 17-րդ միջազգային մասնագիտացված «Կրթություն և կարիերա EXPO-2017» ցուցահանդեսը, որին մասնակցում էր նաև Երևանի պետական համալսարանը:

[26.04.17] ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐՈՎ ՀԱՆԴԵՍ Է ԳԱԼԻՍ ԹԵԼ ԱՎԻՎԻ «ՇԱՐԼՈՏՏԱ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ
Ապրիլի 25-30-ը ԵՊՀ-ի հրավերով Հայաստան է ժամանել «Շարլոտտա» երգչախումբը, որը ելույթներ կունենա՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի:

[26.04.17] **ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ**
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը շարունակում է վեբինարների միջոցով ուսանողներին ծանոթացնել անձնային ու մասնագիտական զարգացման, տեղական ու միջազգային աշխատաշուկայի առանձնահատկություններին:

[27.04.17] **ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՎԱԾՈՒՄ ԷԻՆ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ**
Ապրիլի 26-ին ԵՊՀ մեծ դահլիճում հանդես եկավ «Շարլոտտա» երգչախումբը՝ իր ելույթները նվիրելով Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

[27.04.17] **ՎԱՂՈՒՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ, ԲԱՅՑԵՎ ԱՌԵՂԾՎԱԾ ՄՆԱՑԱԾ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ**
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում այսօր անցկացվեց «Չարենցյան ընթերցումներ» ավանդական դարձած գիտական նստաշրջանը:

[28.04.17] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ**
Ապրիլի 24-28-ը ԵՊՀ-ում անցկացվել է «Սոցիալական աշխատանքը և մարդու անվտանգությունը» խորագրով ուսումնական ծրագիր:

[28.04.17] **YSU.AM-Ը ԱՌԱՋԻՆՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ԿԱՅՔԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ**
Հրապարակվել են Հայաստանի բուհերի վեբ կայքերի վիրտուալ ինտելեկտուալ կապիտալի ինդեքսի (QI, Arcaler Scorecard) 2017 թ.-ի ապրիլ ամսվա համեմատական ցուցանիշները:

[01.05.17] **ԿԱՐԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ**
Ապրիլի 26-27-ը Մայր բուհի և Չեխիայի Հանրապետության Կարլի համալսարանի միջև համագործակցության հուշագրի շրջանակներում Կարլի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Տոմաշ Զիմայի հրավերով երկօրյա աշխատանքային այցով Պրահայում էր ԵՊՀ պատվիրակությունը:

[02.05.17] **ԿԱՅԱՑԱՎ «Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ԽԱՂԻ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ**
Մայիսի 1-ին Մայր բուհում տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԽ գիտակրթական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղի միջբուհական առաջնությունը:

[02.05.17] **ՄԵԾ ԱՍՏՂԱՖԻԶԻԿՈՍ ԵՎ ՄԵԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԵՆԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ**
Այսօր ԵՊՀ Կոնֆերենց դահլիճում մեկնարկեց աստղաֆիզիկոս Բենիկ Թումանյանի 100-ամյակին նվիրված հանրապետական երկօրյա գիտաժողովը:

[02.05.17] **ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ**
ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը ԵՊՀ դասախոսների և գիտաշխատողների համար ՀՀ ՊՆ-ի աջակցությամբ ապրիլ ամսին անցկացրել է նախնական զինվորական պատրաստության դասընթաց:

[02.05.17] **ԵՊՀ ԹԻՄԸ ՇՈՒՏՈՎ ԿՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ**
Այսօր Մայր բուհում տեղի ունեցավ «Իմ ֆինանսների ամիս» խորագրով խնայողությունների խաղի միջֆակուլտետային առաջին փուլը:

[02.05.17] **«ՄԵԾԱՀՈԳԻ՛ ԵՂԵՔ ՈՒ ՄԻ՛ ԿՈՐՑՐԵՔ ՁԵՐ ԴԵՄՔՆ ՈՒ ԴԻՄԱԳԻԾԸ»**
ԵՊՀ-ում այսօր «Հաջողության նախագիծ» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ հանդիպում «Էսթինգ» ՍՊԸ-ի տնօրեն Գրենիկ Հակոբյանի հետ:

[03.05.17] **ԳԻՏԱՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄՐՑՈՒՅԹ՝ ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓՈՎ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում կայացավ «Գիտախոս» գիտահանրամատչելի զեկուցումների մրցույթի եզրափակիչ փուլը:

[03.05.17] **ԿՈՄԱՆԴՈՍԸ ԿՐԿԻՆ ԵՊՀ-ՈՒՄ ԷՐ**
Մայիսյան տոներին ընդառաջ՝ ԵՊՀ ուսանողների հյուրն էր Շուշիի ազատագրման գլխավոր «մեղավորը»:

[03.05.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆ ԲԻԶՆԵՍ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻՆ**
Այսօր ԵՊՀ «Հովհաննես Ադամյան» սրահում տեղի ունեցավ «Նորարարություն և ձեռներեցություն» խորագրով վեբինար:

[04.05.17] **ԵՊՀ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ 10 ՏԱՐԵԿԱՆ Է**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում՝ նվիրված ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի (ՔՄՀԿ) 10-ամյակին:

[04.05.17] **ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԵՊՀ 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ**
Կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 7 և ընթացիկ հարցերով:

[04.05.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐԵԼ ՀՈՒՅԶԵՐԸ**
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց «Աշխատանքային գործընթացում հուզական ինտելեկտի (EQ) և կրեատիվության կիրառումը՝ որպես ինքնակարգավորման միջոց» թեմայով երկօրյա սեմինար-դասընթացը:

[05.05.17] **ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ 60 ՏԱՐԵԿԱՆ Է**
ԵՊՀ բազմավաստակ գիտնականներից մեկը՝ ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Սաղյանը, վերջերս նշել է իր ծննդյան 60-ամյակը:

[05.05.17] **ԵՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**
Փաստաթղթերն ընդունվելու են մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը (հանգստյան օրերն են՝ մայիսի 7, 9, 14, 21):

[05.05.17] **ԲՈՒՀ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՓՈՒԼ Է ԹԵՎԱԿՈՒՄ**
Այսօր ԵՊՀ-ում ամփոփվեց «Լիդերության դերը կարիերայի զարգացման գործում. բուհ-ձեռնարկություն համագործակցության նոր ձևաչափ» խորագրով ծրագիրը:

[06.05.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՅՈՒՐԱՅՆՈՒՄ ԵՆ ԲԱՆԱՎԻՃԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ անգլերեն լեզվով անցկացվեց «ՄԱԿ-ի մոդել» խորագրով կոնֆերանս:

[06.05.17] **ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՀՀ-ՈՒՄ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ**
Մայիսի 5-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել էր հանդիպում Վաշինգտոնի «Իրավաբանական օգնություն» (Legal Aid Society) ՀԿ-ի իրավաբանական տնօրեն Չին Լիի հետ:

[09.05.17] **ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՌԱՏՈՆ Է**
Մայիսի 9-ը եռատոն է ողջ հայ ժողովրդի համար: Այս օրը նշվում են Հայրենական պատերազմում Խորհրդային Միության հաղթանակի, Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձերը:

[10.05.17] **ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ դատական նիստերի դահլիճում մեկնարկեց Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված «Իրավունքի արդի հիմնախնդիրները» խորագրով եռօրյա գիտաժողովը:

[10.05.17] **ԴԵՂԱՏՈՒՆՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԾԱՌԱՅԻ ՈՐՊԵՍ ՊՐԱԿՏԻԿ ԿՐԹԱԿԱՆ ԲԱԶԱ**
Այսօր ԵՊՀ-ն և «Ալֆա Ֆարմ» դեղատների ցանցը Մայր բուհի 1-ին մասնաշենքում գտնվող Ֆարմացիայի ինստիտուտի առաջին հարկում համատեղ բացեցին դեղատուն:

[10.05.17] **«ԱՄԵՆԱԽԵԼԱՑԻՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում կայացավ «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը:

[10.05.17] **«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐՈՊԱ Է». ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ**
Ահա այս կարգախոսով են եվրոպացի երիտասարդ դեսպանները շրջում տարբեր երկրներում և երիտասարդներին ծանոթացնում ԵՄ-ին ու դրա ընձեռած հեռանկարներին:

[10.05.17] **ԱՐՑԱԽՑԱՆ ԱՅՑԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻՆ**
Մայիսի 5-9-ը ԵՊՀ ուսխորհրդականներն Արցախում էին՝ մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումների շարք իրականացնելու նպատակով:

[10.05.17] **ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ» ԷՐ**
Այսօր ԵՊՀ-ում անցկացվեց ուսումնական վարժանք՝ արտակարգ իրավիճակներում մարդկանց ցուցաբերած գործողությունները և նրանց շենքից տարհանելու կանոնները կատարելագործելու նպատակով:

[11.05.17] **ԵՊՀ-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՇՈՒՆՉ ԵՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**
Մայիսի 11-ին ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի «PR պրակտիկում» առարկայի շրջանակներում համալսարանական մի խումբ ուսանողներ նախաձեռնել էին «Ազգային դիմագիծ» խորագրով միջոցառումը:

[11.05.17] **ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՈՒԳԸ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ**
Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում մեկնարկեց «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնահարցերը» խորագրով երկօրյա գիտաժողովը:

[11.05.17] **ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ ՈՒԽ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հայտնի սեմինարավար Վաչե Դավթյանի «Тайм-в-кайф» խորագրով սեմինարը:

[12.05.17] **ԻՐԱՔՅԻ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ**
Մայիսի 11-ին համալսարանականների հյուրն էր Հայաստանում Իրաքի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Հայդար Ռամզի ալ-Սումեյդային:

[12.05.17] **ԵՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է «STUDY WORLD-2017» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ**
Մայիսի 12-13-ը Բեռլինում տեղի է ունենում «Study World» ամենամյա ցուցահանդեսը, որտեղ առաջին անգամ ներկայացված է նաև Հայաստանի տաղավարը:

[12.05.17] **ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ**
Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ բեմականացում՝ «Արտասովոր հոբելյան» խորագրով:

[12.05.17] **ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՎ ԱՐԺԵՎՈՐՎԵՑ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՎԱՍՏԱԿԸ**
Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետում տեղի ունեցավ պատմաբան Լենդրուշ Խուրշուդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանը:

[15.05.17] **«ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ Է, ԵՐԲ ՁԵԶ ՄՈՏ ՍՏԱՑՎՈՒՄ Է». ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
Այսօր ԵՊՀ ՈՒԽ-ի կողմից կազմակերպվող «Հաջողության նախագիծ» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ հանդիպում «Զարթուցիչ» ծրագրի ղեկավար Գրիգոր Առաքելյանի հետ:

[15.05.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀԸ 98 ՏԱՐԵԿԱՆ Է**
Համալսարանն այն կենսատու արմատն է, որից ճյուղավորվել է մեր հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասը և հիմք հանդիսացել ՀՀ գիտությունների ակադեմիայի ստեղծման համար:

[16.05.17] **ՖԻՐԴՈՒՍԻԻ «ՇԱՀՆԱՄԵՆ» ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում կազմակերպվել էր իրանցի անվանի գրող Ֆիրդուսիի մեծարմանը նվիրված գիտաժողով:

[16.05.17] **ԲՈՒՀԱԿԱՆ ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Այսուհետ կրիմինալիստիկա ուսումնասիրող ուսանողներն ու ոլորտի գործող մասնագետները նոր ուղեցույց կունենան:

[16.05.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ԿՐԿՆԱԿԻ ՏՈՆ Է**
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «Ուսանող-2017» համերգ-մրցանակաբաշխությունը, որն այս տարի նվիրված էր Մայր բուհի հիմնադրման 98-ամյակին և Ուսանողների և երիտասարդների օրվան:

[17.05.17] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՅՈՒՐԱՑՆՈՒՄ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ**
Համալսարանական մի խումբ ուսանողներ ԵՊՀ «Վարդանանք» ակումբի նախաձեռնությամբ կյուրացնեն ադրբեջաներեն լեզուն:

[17.05.17] **ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է ԱԳՆ ՄԵԴԱԼՈՎ**
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանն արժանացել է ՀՀ ԱԳՆ Պատվո մեդալին:

[17.05.17] **ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԵՆ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ «Եվրասիական ինտեգրացիան Ռուսաստանի և Հայաստանի համար աշխարհաքաղաքական համատեքստում. մարտահրավերներ և հեռանկարներ» խորագրով գիտաժողովը:

[17.05.17] **«ARMENQA» ՆԱԽԱԳԻԾՆ ԱՄՓՈՓԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Բարձրագույն կրթության որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներ. ձեռքբերումներ և հիմնախնդիրներ» թեմայով եզրափակիչ համաժողովը:

[18.05.17] **ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ. ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆՆԵՐԸ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Հայաստան-Թուրքիա. երկխոսության ուղիների որոնում» թեմայով երկօրյա գիտաժողովը:

[18.05.17] **ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**
Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկեց «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցերը» խորագրով միջազգային 5-րդ գիտաժողովը:

[19.05.17] **ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՀՀԱ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍՆԱԿԻՑ**
Մայիսի 16-ին Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում մեկնարկեց Եվրոպական համալսարանների հրատարակչությունների ասոցիացիայի առաջին կոնֆերանս-աշխատաժողովը, որին մասնակցում էր նաև ԵՊՀ հրատարակչությունը:

[19.05.17] **ՀԵՐՈՍՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻ ԵՆ, ՔԱՆԻ ԴԵՌ ՎԱՌ Է ՆՐԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԸ**
Այսօր ԵՊՀ «Վարդանանք» ակումբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի զոհված ուսանող-ազատամարտիկ, կապիտան Արսեն Ղազարյանին:

[19.05.17] **ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐՆԻՍԱԺ. ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ՈՒ ԾԱՆՈԹԱՑՆՈՒՄ ԵՆ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԸ**
Արդեն 7-րդ անգամ ԵՊՀ-ում անցկացվեց հոգեբանական վերնիսաժ, որի առանձնահատկությունն այս տարի այն էր, որ մասնակցում էին նաև գործատուները:

[19.05.17] **ԵՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈՎ ՄՈՆՊԵԼՅԵԻ ՊՈԼ ՎԱԼԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԷՐ**
Մայիսի 14-18-ը համալսարանականները մասնակցել են ԵՊՀ-ի և Մոնպելյեի Պոլ Վալերի համալսարանի միջև համագործակցության 30-ամյակին նվիրված գիտաժողովին:

[20.05.17] **ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ**
Մայիսի 19-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Մշակութային դաստիարակություն» մեկամսյա ծրագրի հերթական հանդիպում-դասախոսությունը:

[20.05.17] **ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**
Այսօր ԵՊՀ-ում կազմակերպվել էր «Անվտանգությունը Հարավային Կովկասում չճանաչված պետությունների քաղաքական ինստիտուտների զարգացման համատեքստում» թեմայով միջազգային կլոր սեղան-քննարկում:

[20.05.17[**ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐՈՎ**
«Erasmus+»-ի և «DAAD»՝ ԵՊՀ-ում գործող փոխանակման ծրագրի շրջանակում Կենսաբանության ֆակուլտետի 2 ուսանողներ 6 ամիս հետազոտություններ են իրականացրել Գերմանիայի Սարլանդի համալսարանում:

[20.05.17] **ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ԵՊՀ ՈՒԽ ԱՄՍԱԹԵՐԹԸ**
Այսօր ԵՊՀ ՈՒԽ-ի նախագահության նիստի շրջանակում տեղի ունեցավ «Ալեք Մանուկյան 1» ամսաթերթի շնորհանդեսը:

[22.05.17] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳԻՇԵՐՎԱ ՄԱՄՆԱԿԻՑ**
Այս տարի «Թանգարանային գիշեր» խորագրով միջոցառումներին ակտիվ մասնակցել են նաև ԵՊՀ մշակույթի կենտրոնի սաները:

[22.05.17] **ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԴԵՐԱՍԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ**
ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Մշակութային դաստիարակություն» ծրագրի շրջանակում այսօր տեղի ունեցավ հերթական հանդիպում-դասախոսությունը. հյուրը ՀՀ վաստակավոր դերասան Նարեկ Դուրյանն էր:

[22.05.17] **ԳԵՐՄԱՆԱՅԻ ՊՐՈՖԵՍՈՐՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ ԵՊՀ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻՆ**
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը Գերմանիայում ծավալած հայանպաստ գործունեության համար Մարտին Իլերթին ԵՊՀ ոսկե մեդալ շնորհեց:

[22.05.17] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՋՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՆ ԳՐԱՆՑԵԼ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ**
Այսօր ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում ամփոփվեցին Ռուս բանասիրության ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպված ռուսաց լեզվի օլիմպիադայի արդյունքները:

[25.05.17] **ԵՊՀ ԹԻՄԸ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Է ԳՐԱՆՑԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ**
Մայիսի 20-25-ը ԱՄՆ-ում անցկացվող «ACM-ICPC» ծրագրավորման միջազգային օլիմպիադայի եզրափակիչ փուլում ԵՊՀ թիմը աշխարհի 133 համալսարանների թիմերի միջև պայքարում զբաղեցրել է 78-րդ հորիզոնականը՝ լուծելով առաջադրված խնդիրներից 4-ը:

[25.05.17] **ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ ԻՏԱԼԱՑԻՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ**
Իտալացի լրագրող Սիմոնե Զոպպելլարոն ներկայացրեց Հայաստանն իտալական լրատվամիջոցների և հրատարակությունների տեսանկյունից:

[25.05.17] **ԵՊՀ-Ն ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱԳԻՐ Է ԿՆՔԵԼ**
Մայիսի 24-ին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը և Պոտսդամի Լեփսիուսի տուն-թանգարանի գիտական ղեկավար Ռոլֆ Հոսֆելդը ստորագրեցին մասնագիտական համագործակցության օժանդակության պայմանագիր:

[25.05.17] **ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ ԲՈՒՀԵՐԸ**
Այս օրերին ԵՊՀ-ն հյուրընկալել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի պատվիրակությանը:

[26.05.17] **ԲԵՄՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒ ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԻՆՔՆԱՏԻՊ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐ ԷԻՆ**
Մայիսի 25-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի «Համալսարան» անսամբլի և ԵՊՀ մշակույթի կենտրոնի մասնակցությամբ տեղի ունեցավ տոնական համերգ:

[26.05.17] **«ՀՐԴԵՀ» ԵՊՀ-ՈՒՄ. ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎԵԼ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**
ԵՊՀ քաղաքաշտպանության ամբիոնի նորակառույց մասնաշենքում դասերի ընթացքում հրդեհ էր բռնկվել: Ուսանողները տարհանվել են, բայց կան տուժածներ:

[26.05.17] **ԵՊՀ ՈՒԳԸ-Ն ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ԿԻՍԱՄՅԱԿԸ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԳԸ կիսամյակային ընդլայնված նիստը:

[26.05.17] **ՆՈՐ ԼՍԱՐԱՆ ՀԵՌԱԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ԵՎ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ**
Այսօր ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետն ու Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը բացեցին հեռակոնֆերանսների և հեռաուսուցման լսարան:

[28.05.17] **ՍՊԱ-ՀՈԳԵԲԱՆՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ԱՆՑԵԼ ԵՊՀ-ՈՒՄ**
ՀՀ ՊՆ 30-ից ավելի սպա-հոգեբաններ ԵՊՀ-ում անցել են մասնագիտական վերապատրաստման դասընթաց, որն ամփոփվեց այսօր՝ գիտական կոնֆերանսով:

[29.05.17] **ՉԻՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՆԴԵՊ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՃՈՒՄ Է**
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի չինարեն լեզվի և մշակույթի կենտրոնի սաները հավաստագրեր ստացան:

[29.05.17] **ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԸ՝ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ**
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ «Ավետիս Ահարոնյան-150. գիտաժողովի նյութեր» գրքի շնորհանդեսը:

[29.05.17] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ՝ ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ**
Մայիսի 26-28-ը Դիլիջան քաղաքում անցկացվեց ԵՊՀ բնապահպանական ակումբի «Համալսարանականները՝ հանուն բնության» եռօրյա ծրագիրը:

[29.05.17] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԸ**
Այսօր ԵՊՀ ուսանողները հյուրընկալել էին Արցախի Հանրապետության գրողների միության նախագահ, Արցախի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր, բանաստեղծ Վարդան Հակոբյանին:

[30.05.17] **«ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՄԱՐԴԸ ԴԱԺԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌՋԵՎ Է»**
Եթե 100 տարի առաջ Մերձավոր Արևելքի քրիստոնյաները կազմում էին աշխարհի քրիստոնյաների 10%-ը, ապա այժմ այդ թիվը հասել է 3.8%-ի:

[30.05.17] **ԱՐԺԵՎՈՐՎԵՑ ՊՐՈՖԵՍՈՐ ՇԻՐԱԶ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՂԻՆ**
Այսօր ԵՊՀ ռեկտորատի նիստում նշվեց վաստակաշատ գիտնական ու մանկավարժ Շիրազ Մարգարյանի 70-ամյակը:

[30.05.17] **ԳԵՎՈՐԳ ՀԱՋՅԱՆ. «ՇԱՏ ՈՒՐԱԽ ԵՄ, ՈՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՄԱՆ ԶՈՐԱԳՆԴԻ ԶԻՆՎՈՐ ԵՄ»**
Այսօր ԵՊՀ ռեկտորատի նիստում նշվեց ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գևորգ Հաջյանի 70-ամյակը:

[31.05.17] **ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ**
Մայիսի 30-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված ՀՀ կոմպոզիտորների միության 85-ամյակին:

[01.06.17] **ԵՊՀ ՈՒԽ-Ն ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ԿԻՍԱՄՅԱԿԸ**
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ուսանողական խորհրդի ընդլայնված նիստը:

[02.06.17] **ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ընդունեց չինական Նանկայի համալսարանի պատվիրակությանը:

[02.06.17] **ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՊՀ-ԻՑ Է**
Մայիսի 31-ին ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում տեղի է ունեցել Հայկական մաթեմատիկական միության (ՀՄՄ) համագումարը:

[05.06.17] **ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ**
ԵՊՀ էկոլոգիական իրավունքի կենտրոնում ոլորտի մասնագետները քննարկում էին էկոլոգիական տեղեկատվության և մարդու կենսագործունեության միջավայրի անվտանգության հարցերը:

[06.06.17] **ԵՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ 30 ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ**
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2016-2017 ուստարում Իրավաբանական կլինիկայի դասընթացներն ավարտած ուսանողների վկայագրերի հանձնման արարողությունը:

[06.06.17] **ԵՊՀ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲՆ ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ԿԻՍԱՄՅԱԿԸ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ Լ. Ազգալդյանի անվան մարտական պատրաստության ակումբի կիսամյակային ամփոփիչ նիստը:

[06.06.17] **ՌՈՒՍԱԳԵՏՆԵՐԸ ՆՇՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՏՈՆԸ**
Այսօր ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ Ռուսագետների հայկական ասոցիացիայի հոբելյանական նիստը՝ նվիրված կառույցի հիմնադրման 25-ամյակին:

[12.06.17] **ԵՊՀ-Ն՝ «ԱՐՏ ՖԵՍՏ-2017» ՓԱՌԱՏՈՆԻ ՄԱՍՆԱԿԻՑ**
Հունիսի 10-ին կայացան «Արտ Ֆեստ-2017» երիտասարդական միջազգային փառատոնի երգարվեստի լսումները, որոնց մասնակցում էին նաև ԵՊՀ մշակույթի կենտրոնի սաները:

[14.06.17] **ՀԱՅԱԶԳԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՑ ԵՊՀ-ՈՒՄ**
Հունիսի 12-13-ը ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում դասախոսություններով հանդես եկավ ԱՄՆ-ի Ռոչեստերի համալսարանի պրոֆեսոր Սնակ Մկրտչյանը:

[15.06.17] **ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՐԳԻ ՈՒ ՊԱՐԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՎԱԾՈՒՄ ԷԻՆ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ**
Այսօր ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպվել էր ազգագրական երգի ու պարի երեկո՝ նվիրված ՀՀ պետական խորհրդանիշների օրվան:

[15.06.17] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ «ԲԻԵՆԱԼԵ- 2017»-ՈՒՄ ՀԻՇԵԼ ԵՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻՆ**
«Բիենալե-2017»-ում Հայաստանը ներկայացնում էր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ալեքսանդր Սաֆարյանը:

[15.06.17] **ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԵՆ**
Հունիսի 14-ին Գիտխորհրդի նիստերի դահլիճի նախասրահում տեղի ունեցավ ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի ընդլայնված նիստը:

[15.06.17] **ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կայացավ «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորագրով երիտասարդ գիտնականների դպրոցը:

[16.06.17] **ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ**
Այս օրերին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի 5-րդ հարկում ընթանում է 2016-2017 ուստարվա շրջանավարտների շրջաթերթերի գրանցման և դիպլոմների հանձնման գործընթացը:

[19.06.17] **ՆՈՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՄԿԻՋԲ ԿԴԱՌՆԱ**
Հունիսի 17-ին ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնում տեղի ունեցավ Մոլեկուլային գենետիկայի լաբորատորիայի հանդիսավոր բացումը:

[19.06.17] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑԻՆ ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ**
Հունիսի 17-ին Արագածոտնի մարզի Թաթուլ գյուղում տեղի ունեցավ Հայաստանի Ազգային հերոս, ԵՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկ Թաթուլ Կրպեյանի տուն-թանգարանի բացման արարողությունը:

[19.06.17] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ ԵՆ**
Հունիսի 17-ին ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԽ-ն կազմակերպել էր «ԵՊՀ ուսանողները՝ երեխաների համար» խորագրով միջոցառում:

[20.06.17] **ԱՄՓՈՓՎԵՑ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ**
Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Մշակութային դաստիարակություն» ծրագրի փակման արարողությունը:

[23.06.17] **ԵՊՀ-Ն ԿԱՊԵՐ Է ՀԱՍՏԱՏՈՒՄ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԵՏ**
Հունիսի 23-ին ԵՊՀ պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանն ընդունեց Ինդոնեզիայի պատվիրակությանը:

[23.06.17] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՀԱՄԱԽՄԲԵԼ ԷՐ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ**
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց «Կիսահաղորդչային միկրո- և նանոէլեկտրոնիկա» խորագրով միջազգային 11-րդ գիտաժողովը:

[23.06.17] **ՏԱՇՔԵՆԴԻՑ ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՎԱՆԻՑ ՄԻՆՄԿ. ԵՐԹՈՒՂԻՆ «ԱՆՑՆՈՒՄ Է» ԵՊՀ-ՈՎ**
Ուրալի դաշնային համալսարանի «Ուրալ-Եվրասիա» կենտրոնի «Ընդհանուր ճակատագրի հարյուրամյակը» երիտասարդական մրցույթի հայաստանյան հաղթող է ճանաչվել ԵՊՀ ուսանողը:

[23.06.17] **ԱՄԵՆԱՄՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ Է ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ**
Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկեց Հայկական տնտեսագիտական միության տարեկան եռօրյա գիտաժողովը:

[26.06.17] **ԹՅՈՒՐՔԱԳԵՏՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ԵՊՀ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ**
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բաժնի ուսանողների դիպլոմների հանձնման արարողությունը տեղի է ունեցել Գյումրիում:

[26.06.17] **ԱՄԵՆԱՄՅԱ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻՆ ԿՀԱՋՈՐԴԻ ԴԵՊԻ ԱՐՑԱԽ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ**
Հունիսի 24-ին ՊՆ ԴՕՍԱՖ-ում տեղի ունեցավ ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի «Ամառային դպրոց-2017» ծրագրի բացման արարողությունը:

[26.06.17] **ՆՈՐ ԳԻՐՔ ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հայագետ, թարգմանիչ Դորա Սաքայանի «Նրանց քշում են անապատները…» գրքի շնորհանդեսը:

[26.06.17] **ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
Այսօր «Արմենպրես» գործակալության մամուլի սրահում տեղի ունեցավ «ACM-ICPC» ծրագրավորման հեղինակավոր միջազգային օլիմպիադայի եզրափակչին մասնակցած ԵՊՀ ուսանողների մամուլի ասուլիսը:

[29.06.17] **«ԼՈՒՅՍԸ ԽԱՎԱՐՈՒՄ» ԳՐՔԻ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԵՆ**
Հունիսի 28-ին ՀՀ Սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ լիբանանահայ լուսանկարիչ Գաբրիել Փանոսյանի «Լույսը խավարում» պատկերագրքի շնորհանդեսը:

[30.06.17] **ԵՊՀ-Ն ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ**
Հունիսի 20-24-ը ԵՊՀ պատվիրակությունը մասնակցել է Մարտին Լյութերի անվան Հալլե-Վիտենբերգ համալսարանի 200-ամյակին նվիրված միջոցառումներին, ինչպես նաև ստորագրվել է համագործակցության 5-ամյա պայմանագիր:

[30.06.17] **ԲԱՅՐՈՆԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ 200 ՏԱՐՎԱ ՀԵՌՎԻՑ**
Աշխարհի տարբեր անկյուններից բայրոնագետները հավաքվել են Հայաստանում՝ ևս մեկ անգամ վերլուծելու և մեկնաբանելու նրա՝ հայերի հետ ունեցած առնչությունները:

[30.06.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՈՒՆԻ**
ԵՊՀ-ն ու Շանհայի մանկավարժական համալսարանի ղեկավարությունը համագործակցության համաձայնագիր կնքեցին:

[30.06.17] **ԵՊՀ-Ն ԱՄՓՈՓԵԼ Է 2016 Թ.-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**
Հունիսի 22-ին տեղի է ունեցել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի՝ հարցման կարգով նիստ՝ օրակարգային երկու հարցերով:

[03.07.17] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՄՓՈՓԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԲԻԶՆԵՍ ԾՐԱԳՐԵՐԸ**
Հունիսի 30-ին ԵՊՀ-ում ամփոփվեց «Ուսանողների ձեռներեցական ունակությունների զարգացումը ստարտափ նախաձեռնությունների շրջանակում» դասընթացների շարքը:

[03.07.17] **ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ԿՍՏԱՆԱՆ ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Սփյուռքի նախարարության և ԵՊՀ-ի համատեղ նախաձեռնությամբ իրականացվող «Սփյուռք» ամառային դպրոցի բացման արարողությունը:

[03.07.17] **ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է**
Այսօր նորվեգական Բերգենի համալսարանի պրոֆեսոր Նիլս-Կորե Բիրկելանդը դասախոսություններ կարդաց ուսանողների համար:

[03.07.17] **ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԱՆՑԵԼ**
Հունիսի 26-28-ը ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի շրջանակում անցկացվել է թեստավորում (C-1 մակարդակ):

[06.07.17] **ԷՄԻԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ. «ԾԱՌԱՅՈՒՄ ԵՄ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ»**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստում նշվեց ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էմիլ Գևորգյանի 70-ամյակը:

[06.07.17] **ԵՊՀ-Ն ԿՈՒՆԵՆԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ**
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս կիսամյակի վերջին նիստը՝ օրակարգային 10-ից ավելի հարցերով:

[06.07.17] **ԵՊՀ-Ն ՃԱՆԱՊԱՐՀԵՑ ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐԻ ԵՎՍ ՄԵԿ ՍԵՐՆԴԻ**
Հուլիսի 5-ին «Դիլիջան» ազգային պարկում տեղի ունեցավ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:

[07.07.17] **ԿԱՅԱՑԱՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ**
Հունիսի 27-ից հուլիսի 4-ը ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետը Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում կազմակերպել էր «Մաթեմատիկա և կիրառություններ» թեմայով չորրորդ ամառային դպրոցը:

[07.07.17] **ԻՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑԻՆ ԵՊՀ-ՈՒՄ**
Այսօր ԵՊՀ-ում էին հյուրընկալվել Իրանի Իսլամական Հանրապետության գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության, ինչպես նաև մի շարք բուհերի ներկայացուցիչներ:

[10.07.17] **ԿԱՅԱՑԱՎ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ**
Հուլիսի 8-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ 2016-2017 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:

[10.07.17] **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ**
Համառուսական ուսանողական սոցիալական նախաձեռնությունների մրցույթի հաղթողների և ծրագրի համակարգողների պատվիրակությունը Հայաստանում կազմակերպված փորձի փոխանակման այցի շրջանակներում քննարկեցին ԵՊՀ-ի հետ համագործակցության հեռանկարները:

[12.07.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿԼԻՆԵՆ ԶԻՆՎՈՐԻ ՊԵՍ ՈՒ ԶԻՆՎՈՐԻ ԿՈՂՔԻՆ**
Հուլիսի 12-18-ը Արցախի Հանրապետությունում կանցկացվի «Համահայկական ուսանողական ռազմական բանակում» ծրագիրը:

[13.07.17] **100-ԻՑ ԱՎԵԼԻ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐ ԵՊՀ-ՈՒՄ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՆ ՍՈՎՈՐՈՒՄ**
Այս տարի ՀՀ Սփյուռքի նախարարության և ԵՊՀ-ի համատեղ կազմակերպած «Սփյուռք» ամառային դպրոցին մասնակցում են 29 երկրներից ժամանած 262 սփյուռքահայեր: Ամենամեծ թվով մասնակիցներ ներգրավված են «Հայոց լեզվի արագացված ուսուցում» դասընթացում, որի մասին առավել մանրամասն զրուցել ենք ԵՊՀ դասախոս, բան. գիտ. թեկնածու, դասընթացի համակարգող Մերի Հովհաննիսյանի հետ:

[14.07.17] **ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է**
ԵՊՀ են այցելել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) կրթաթոշակների հանձնաժողովի ներկայացուցիչները:

[14.07.17] **«ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ, ՏՆՕՐԵՆՆԵՐԸ, ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԻՐԵՆՑ ԵՐԿՐՆԵՐ, ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԱՅՆ, ԻՆՉ ՄԿՍՎԵԼ Է ԱՅՍՏԵՂ...»**
«Սփյուռք» ամառային դպրոցում, տեղացի մասնագետներից բացի, դասավանդում են նաև հրավիրյալ դասախոսներ: Նրանցից մեկը Լիբանանի Հայկազյան համալսարանի սոցիալական և վարքային գիտությունների բաժանմունքի (որի կազմում են Մանկավարժության և Հոգեբանության ամբիոնները) վարիչ Հակոբ Յակուբյանն է:

[14.07.17] **ԱՊԱԳԱ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԸ ԴԻՊԼՈՄՆԵՐ ՍՏԱՑԱՆ**
Այսօր Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողները հանդիսավոր արարողությամբ դիպլոմներ ստացան:

[14.07.17] **ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՆ**
Հուլիսի 12-18-ը Արցախի Հանրապետությունում 160 ուսանողներ Համահայկական ուսանողական ռազմական բանակումի շրջանակում կապրեն զինվորական առօրյայով:

[14.07.17] **ԵՎՍ ՄԵԿ ՍԵՐՈՒՆԴ ԱՎԱՐՏԵՑ «ՍՓՅՈՒՌՔ» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ**
Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Սփյուռք» ամառային դպրոցի 3 դասընթացների ամփոփման արարողությունը:

[14.07.17] **ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԵԿ ՎԱՅՐՈՒՄ**
Ավելի քան 10 երկրների 50-ից ավելի գիտնականներ հավաքվել են Երևանում՝ քննարկելու ֆիզիկայում սիմետրիայի մեթոդների ուսումնասիրման վերջին ձեռքբերումները:

[17.07.17] **ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Հուլիսի 14-ին IBM նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնում (ISTC) տեղի ունեցավ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների սկսնակ ստարտափների և ստարտափ մշակույթի զարգացման միտումների մասին քննարկում:

[18.07.17] **ԱՆՄԻՋԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ**
Հուլիսի 17-ին՝ ԵՊՀ ուսանողական համահայկական ռազմական բանակումի եզրափակիչ օրը, ուսանողները հանդիպեցին ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի, Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար Լևոն Մնացականյանի, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ալեքսան Հարությունյանի հետ:

[20.07.17] **ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ ԿԽԹԱՆԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ**
Հուլիսի 19-ին մեկնարկեց «ԵՊՀ ամառային ստարտափ մրցույթ-2017» (YSU Start-Up Challenge Summer-2017) ծրագիրը:

[21.07.17] **ՀԱՅՏՆԻ ԵՆ ԵՊՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
ԵՊՀ ընդունելության 1-ին և 2-րդ փուլերի արդյունքների համաձայն՝ Մայր բուհ է ընդունվել 2545 դիմորդ, որոնցից 420-ը սովորելու են պետպատվերի շրջանակում, մյուսները՝ վճարովի հիմունքներով:

[24.07.17] **ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ՈՒ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է**
Պրոֆեսոր Գագիկ Մելիքյանը դասախոսություն է կարդացել ֆրանսիական Ռենա Դեկարտի անվան համալսարանում (Փարիզ 5):

[31.07.17] **ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է 9-ՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ «ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳԻՐԸ**
Օգոստոսի 2-8-ը «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ իրականացնում է «Միացյալ Հայաստան» ամառային կրթամշակութային արշավ-ուխտագնացությունը՝ «Ազգ-բանակ» նշանաբանով:

[31.07.17] **ԱՄՓՈՓՎԵՑ «ՍՓՅՈՒՌՔ» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ-2017-Ը**
Մեկ ամիս շարունակ հայրենիքում վերապատրաստվող սփյուռքահայերը մասնագիտական գիտելիքները համալրելուց և Հայաստանի տեսարժան վայրերն այցելելուց հետո վերադառնում են իրենց բնակության վայր՝ շուտով հայրենիք կրկին վերադառնալու ակնկալիքով:

[09.08.17] **ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐՑԱԽ. ՆՊԱՏԱԿԸ՝ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
Ավարտվեց ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի 9-րդ կրթամշակութային մեկշաբաթյա արշավ-ուխտագնացությունը դեպի Արցախ, որն այս տարի ուներ «Ազգ-բանակ» նշանաբանը:

[09.08.17] **ԵՊՀ-ԱԿԱՆՆԵՐԸ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԵԴԱԼԱԿԻՐՆԵՐ**
Մաթեմատիկայի միջազգային ուսանողական օլիմպիադայից Հայաստանը ներկայացնող թիմերը Բուլղարիայից վերադարձան երկու ոսկե, երկու արծաթե և երկու բրոնզե մեդալով:

[24.08.17] **ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է**
ԵՊՀ-ում ներկայումս ընթանում է մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի ընդունելության 3-րդ փուլը (հուլիսի 10-ից օգոստոսի 25-ը), իսկ քննությունները կանցկացվեն օգոստոսի 29-31-ը:

[24.08.17] **ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՍՊԱՍՈՒՄ Է ԻՐ ՆՈՐ ՄԱՆԵՐԻՆ**
ԵՊՀ-ում դասերը կմեկնարկեն սեպտեմբերի 1-ին:

[24.08.17] **ՀԱՅ-ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՓՈՒԼ Է ԹԵՎԱԿՈՒՄ**
ԵՊՀ-ի և Թուրքմենստանի Մահթումկուլիի անվան պետական համալսարանի միջև համագործակցության նոր հուշագիր է ստորագրվել:

[24.08.17] **ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ**
ԵՊՀ-ում 2017-2018 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը, ժամը՝ 10:00-16:00 (հանգստյան օրեր՝ օգոստոսի 26, 27, սեպտեմբերի 3,10): Ընդմիջում՝ ժամը 13:00-14:00:

[25.08.17] **ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՊՐՈՖԵՍՈՐՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ԵՊՀ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ**
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆրունզ Գաբրիելի Ղազարյանը պարգևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով:

[26.08.17] **ԵՊՀ ԹԻՄԸ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Է ԳՐԱՆՑԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԽԱՂՈՒՄ**
Հուլիսի 27-29-ը Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում տեղի է ունեցել միջազգային քրեական իրավունքին նվիրված համաշխարհային դատախաղ-մրցույթ:

[28.08.17] **ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ**
ԵՊՀ առկա ուսուցման համակարգում սովորող բոլոր ուսանողների համար նոր ուսումնական տարին կսկսվի սեպտեմբերի մեկից:

[28.08.17] **ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԺՊԻՏ ՊԱՐԳԵՎԵՑ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ**
ԵՊՀ ուսանողական խորհուրդը կրկին Տավուշի մարզում էր:

[29.08.17] **ՀԱՅՏՆԻ Է ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԴԻՄԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**
Սեպտեմբերի 1-ին Մայր բուհն իր հյուրընկալ դռները կբացի՝ դիմավորելու հին ու նոր համալսարանականներին:

[30.08.17] **ԵՊՀ ՋՈԿԱՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ԲԱԶԵ-2017»-ԻՆ**
Օգոստոսի 27-ին ավարտվեց Ծաղկաձորում անցկացվող «Բազե-2017» երիտասարդական համահայկական ամենամյա հավաքը, որին մասնակցում էր նաև ԵՊՀ ջոկատը:

[30.08.17] **ԵՊՀ-Ն ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՑԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ**
Այսօր ԵՊՀ-ն և Իրանի Իսլամական Հանրապետության Փայամ-ե Նուր համալսարանը տեխնիկական և գիտահետազոտական համագործակցությունների փոխըմբռնման հուշագիր են ստորագրել:

[31.08.17] **ՆԱԽԱՆՇՎՈՒՄ ԵՆ ՀԱՅ-ԻՐԱՔՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐԸ**
Օգոստոսի 30-ին ԵՊՀ էր այցելել Իրաքի Հանրապետությունից ժամանած պատվիրակությունը:

[31.08.17] **ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌՑԱՆՑ**
ԵՊՀ առաջին կուրսեցիներն ուսումնառության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը կարող են ստանալ ԵՊՀ պորտալում առկա կայք-ուղեցույցից: